ԵՐԵՍՈՒՆՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրութեան մէջ.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ" Базарная ул. д. Тамамшева № 16. կամ Tiflis, Rédaction „Mschak".
Տելեֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզւով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ
Տելեֆօն № 253.

Մարիամ Արսէնեան այրի Վանցեանը խորին վշտով ու կսկիծով յայտնում է ծնողներին, ազգականներին և պաշտօնակիցներին ու ծանօթներին իր անմոռանալի ամուսնու՝ առևտրական դպրոցի ուսուցիչ

Գրիգոր Քրիստափորեան ՎԱՆՑԵԱՆԻ

անժամանակ յանկարծամահը

Ամբիծքը՝ հինգշաբթի, մայիսի 8-ին, առաւօտեան 10 ժամին, Մողնու եկեղեցական սենեակում, այնտեղից նոյն եկեղեցին՝ պատարագի. Թաղումը Խօջիվանքի գերեզմանատանը նոյն օրը։

ԲԺՇԿԱՊԵՏ

Ա. Բաքայեանը

այս ամառ շարունակելու է ընդունել GerfiG և ջղային հիւանդներ Կիսլովոդսկում և Եսսենտուկում, մայիսի 16-ից մինչև սեպտեմբերի 15-ը։

[չ. ու. կ.] ա. 12—4

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻՑ

Պատերազմի սպառնալիքը օրէ-օր թուլանում է և պաշտօնական մարմինները աշխատում են հերքել այն լուրերը, որոնք խօսում են պատերազմական եռանդուն պատրաստութիւնների մասին։

Թիւրքական զօրքերը, որոնք գտնվում են պարսկական սահմանագծի մօտ, այլ ևս առաջ չեն գնում և մնում են իրանց բանակատեղերում։

Մակեդոնիայի ապստամբական խմբերը առայժմ խուսափում են ներգործական քայլերից, չը գտնելով խրախոյս բօլգարական պաշտօնական շրջանների կողմից։

Ապստամբական այն շարժումը, որ սկսված էր Հնդկաստանի հիւսիսում Աւղանստանի սահմանի մօտ, ստացաւ աւելի մեծ արտայայտութիւն, քան ենթադրվում էր սկզբում։

Այդ շարժումը, անշուշտ, կը զսպվի կարճ միջոցում և չի առաջացնի քաղաքական փոփոխութիւններ անգլիական տիրապետութեան շրջանում. բայց ինքն ըստ ինքեան նշանակալից է ապստամբական խլրտումների երևոյթը այնպիսի մի ժամանակ, երբ Անգլիան, ընդհակառակը, օրօրում էր և փայփայում մի երազ, որ նա հասել է կատարեալ բարեկամութեան աղւանական տարրի հետ և վայելում է հնդկաստանցիների վստահութիւնը ու համակրութիւնը։

Շատ շատերի համար անսպասելի էր ապստամբական այդ շարժումը ներկայ րոպէում։ Ուստի առաջ են գալիս մի շարք հարցեր, թէ ինչ դրդումներից է առաջ եկել նա. արդեօք տեղական բնաւորութիւն ունի նա, արդեօք հետևանք է նա անգլո-ռուսական համաձայնութեան և ուրեմն դժգոհութեան մի յայտարար է, արդեօք արգասիք է նա օտար որևէ թելադրութեան և արդեօք պատահական մի անցողակի հրաբորբոք է թէ աւելի ապագայ բարդութիւնների նախարան։

Քաղաքական մամուլը աշխատեց կարելին չափ սահմանաչափ նշանակութիւն տալ եղած դէպքին. բայց և այնպէս ստիպված էր արձանագրել, որ շարժման մէջ մասնակցողների թիւը այնքան փոքր չէ, որ մարդիկ արհամարհանքով նայէին նրա վրա։

Եւ ամենից շատ անշուշտ վրդովվեց Անգլիան, որը ցանկացաւ աւելի խորը նայել տեղի ունեցած դէպքերին և. ուսումնասիրելով նրանց բնաւորութիւնը, առաջն առնել ապագայ թիւրիմացութիւնների։

Մարօկկօյի հարցը, որ այնքան քարգացաւ և ծանր ընդհարումների առիթ դարձաւ, սկսում է մեղմանալ և մօտենալ իր վախճանակէտին։ Ֆրանսիան անձկութեամբ սպասում է խաղաղութեան կատարեալ վերականգնման. Աֆրիկայի այդ չարաբաստ խորշում, որովհետև նա բոլորովին զզվել է այն ինտրիգներից, որոնք հիւսվել են համեմատաբար բաւական հասարակ մի հարցի շուրջը։

Ա. Ք.

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Թեհրան, 6 մայիսի

Վերջին օրերս յեղափոխական ընկերութիւնների պատրաստած ագիտացիան շահի դէմ ազգաբնակութեան կողմից համակրութիւն չը գտաւ։ Իրանք անջումանները շտապեցին նամակ գրել շահին և խոստացան աշխատել նրա և կառավարութեան հետ միասին երկիրը խաղաղեցնելու նպատակով։

Մէջլիսում կարդացված շահի պատասխան հրովարտակը ընդհանուրի գոհունակութեանը արժանացաւ։

Ազգաբնակութիւնը վճռել է երեք օր տօնել շահի ծննդեան տարեդարձը։ («Հ. Գ.»)

Պարիզ, 6 մայիսի

Վստահելի աղբիւրներից ստացված տեղեկութիւնների համաձայն, մի ժամանակ դրութիւնը Աւղանստանում լուրջ վտանգ էր սպառնում, անգամ այն միտքն էր ներշնչում՝ թէ գուցէ կռնված ընդհարում տեղի ունենայ նրա և Անգլիայի միջև՝ շնորհիւ տեղական մի՝ քանի շրջանների հակա-անգլիական և առհասարակ հակա-եւրոպական տրամադրութեան։ Սակայն անգլո-հնդկական կառավարութեան ձեռք առած պատերազմական միջոցները ազդեցին հանգստութիւնը վերահաստատելու։ Աֆրոտիտները հրաժարվեցին աջակցել մօխմանդներին։ Ինքը էմիրը կտրուկ կերպով աւղան ցեղերի շարժմանը հակվելու առաջն առաւ։ Մօխմանդները մենակ մնացին։ Հիմք կայ կարծելու, որ դրութիւնը իր սուր կերպարանքը կորցրել է։ («Հ. Գ.»)

Կ. Պօլիս, 5 մայիսի

Կրետէ կղզուց զօրամասերը յետ կանչելու առիթով Բ. Դուռը բողոքագիր ուղարկեց մեծ պետութիւններին։ («Հ. Գ.»)

Վանից, ապրիլի 14-ից, գրված մի նամակից քաղում ենք հետևեալ տողերը, որոնք ներկայումս այդ քաղաքում տիրող դրութիւնն են պատկերացնում որոշ չափով.

«Մի զարմանաք, երբ ըսեմ ձեզ, թէ քաղաքիս վերջին դժբաղդ անցքերուն պատճառաւ շուկան գոց է. ամեն գործ դադրած, ամեն մարդ իր տունը քաշուած կը սպասէ, որ իշխանութիւնը օր մը շուտ վերջ տայ այս անորոշ և անստոյգ կացութեան։ Դպրոցներն ալ գրեթէ փակ էին, իսկ այժմ ալ արձակուրդ է արդէն...

«Բաղդաւոր պէտք է համարինք մեզ, եթէ ներկայ օրերէս աւելի վատթարագոյն օրեր չտեսնենք... Տիրող սղութիւնը, որ չէ թէ միայն հացի՝ այլ ամեն բանի համար է, ուղղակի 81 թուականը կը յիշեցնէ, իսկ աղքատութիւնը օրինակ չունի. գէթ մենք այսպիսի վիճակ մեր ժողովուրդին համար ցարդ տեսած չէինք։ Այսօր վրայ աւելցուցէք նաև 96-ի սարսափները, և ալ ուրիշ բան մի հարցնէք։

«Հայ բանտարկեալներ շատ կան։ Ա.-ն ալ երեք ամիսէ ի վեր բանտն է. $1^1/_2$ տարուան վճիռ է տրուած»։

Մօտ ժամանակներս անգլիական գրավաճառ Մուրրէյը լոյս է ընծայել Վիկտորիա թագուհու յիշողութիւնները։ Վիկտորիա թագուհու անունը մեծ հեղինակութիւն է վայելում, և նրա յիշողութիւնների հրատարակութեանը անգլիացիները նայում էին իբրև մի ազգային գործի վրա։ Գրավաճառը յոյս ունէր, որ հէնց մի այդպիսի ընդարձակ ազգային գործի մէջ էլ ամենից աւելի յուսալի է հարստանալ, և գիրքը գլնահատեց շատ թանգ։ Այդ ժամանակ «Թայմս» թերթում լոյս տեսաւ մի խիստ յօդուած, որտեղ ապացուցվում էր, որ գրավաճառը, նշանակելով անհամեմատ թանգ գին, մեղադրվում է «դրամաշորթութեան» մէջ։

Գրավաճառը «Թայմսի» խմբագրին օրինական պատասխանատուութեան է ենթարկում։

Դատարանում պարզվում է, որ «Թայմսը» այդ արշաւանքն սկսել է շահասիրութիւնից դրդված, որ նա նախ փորձ է արել ընկերանալ այդ հրատարակութեանը, վերցնել նրա մի մասը իր ժառանգարանի համար իբրև բաժին և, միայն անաջողութեան հանդիպելով առևտրական հողի վրա, «Թայմսն» սկսում է արնոտեաւ իր «անշահասիրական» խաղերը։

Դրա հետևանքը եղաւ այն, որ դատարանը ենթարկել է «Թայմս» թերթին 75,000 ռ. տուգանքի։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԵԱՆՔԻ ՏՐԱԳԵԴԻԱՆԵՐԻՑ

I

Որքան էլ ընտելացած լինեն մեր ջղերը արիւնոտ տեսարանների, որքան էլ ընկած մեր աչքում կեանքի արժէքը, այնուամենայնիւ չէ կարելի չը ցնցվել, չը սոսկալ կամայ թէ ակամայ մարտիրոսութիւնների այն հսկայական չափերի առջև, որ կեանքի դժոխային իրականութիւնը տալիս է մեզ այսօր։

Ժամանակակից այլասերված բարքերի ու հասկացողութիւնների բոնկումի մէջ շարունակվում է մի ինչ-որ ահեղ ներքին անտագօնիզմ, որը աննկատելի կերպով նախում է կատարում հասարակական օրգանիզմի մէջ և ստեղծում մի շարք սոսկալի տրագեդիաներ։

Այդ տրագեդիաների շարքում իրանց բնաւորութեամբ ամենաաչքի ընկնող տեղն են բռնում անձնասպանութիւնները, որոնց ստատիստիկան օր-օրի վրա հարստանում է նորանոր փաստերով։

Մի տեղ անձնասպանութիւն է գործում 13 տարեկան պատանին, մի այլ տեղ՝ սիրահարված զոյգերը, երրորդ տեղում՝ ուսանող երիտասարդութեան ներկայացուցիչը, չորրորդ տեղում՝ մայրն է մորթում պատակին և ապա՝ իրան, կամ հայրը վերջ տալիս իր կեանքին...

Եւ այդպէս անվերջ։

Պատճառը՞։

Պատճառը մէկը չէ, միատեսակ չեն. նրանք շատ բարդ են, շատ խոր...

Կեանքը՝ իր աննորմալ կարգերով, ազգամիջավայրը՝ իր վայրենի բարքերով ու հասկացողութիւններով, դժբաղդ սէրը, ուժեղների կամայականութիւններն ու հալածանքը, անգործութեան ծանր հետևանքները... Ահա այն ամենը, որոնք պարարտ հող են հանդիսանում անձնասպանութեան համար։

Զախորդութիւնների դէմ մաքառելու անընդունակ, շուտ վհատվող, թոյլ կամքի տէր մարդիկ, որոնց աչքում կեանքի գերագոյն իմաստն ու արժէքը դալկանում են ինչ-ինչ շարժառիթների հպումից, փշոտ տատասկներից, անձնասպանութեան մէջ են որոնում իրանց միակ փրկութիւնը։

Որքան էլ անըմբռնելի լինի ապրողների համար այդպիսիների քայլը, պարզ է սակայն, որ կեանքի վերջին րոպէին նրանց մտաւոր ու հոգեկան աշխարհը ենթարկված է եղել յանկարծակի յեղաշրջման, սուր հիւանդութեան։

Անձնասպանութեան են դիմում նրանք, որոնք չեն կարողանում տանել կեանքի անպաճոյճ ըեալիզմը, չեն կարողանում սիրել նրան այնպէս, ինչպէս որ նա կայ։

Մեռնում է, որովհետև չէ սիրում կեանքը։

Հասկանալի պատճառաբանութիւն, առանց խորհրդաւոր տրագիզմի։

Իսկ եթէ մէկը սիրում է կեանքը և անձնասպանութիւն է գործում, եթէ դուրս գալ մէկը և ասէր՝ «մեռնում եմ, որովհետև սիրում եմ կեանքը»։

Անհաւատալի պիտի թուար անշուշտ։ Սակայն դա իրողութիւն է։

Մօտ ժամանակներս, Եարօսլաւում, նաւամատոյցի վրա, մօտեցող նաւերին սպասող ահագին բազմութեան առջև տարաձանակի երկու գնդակով վերջ է տուել իր կեանքին մի անյայտ երիտասարդ։

Մեռածի գրպանում գտնում են մի տոմսակ։ «Մեռնում եմ, որովհետև սիրում եմ կեանքը»—ահա նրա բովանդակութիւնը։

Ինչ-որ սոսկալի տրագիզմ կայ թագնված այդ մի քանի բառերի տակ։

Ի՞նչը պիտի հարկադրէր կեանքը սիրողին իր յօժար կամքով զրկվել սիրած կեանքից։ Եթէ վերլուծելու լինենք հասարակական անարդար կարգերը՝ թերևս շարժառիթները հասկանալի կը դառնան։

Այն միջավայրում, ուր անմեղ մարդկանց առաջարկվում է ընտրել երկուսից մէկը՝ կամ գնդակ և ռումբ, կամ 3000 րուբլի տուգանք, 3 ամսվայ բանտարկութիւն և ոստիկանական անվերջ հալածանք։ այն-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

«ՊԱՐՏՔԸ ՏԱԼՈՎ, ՄԵՂՔԸ ԼԱԼՈՎ»...

— Հայմ, այս օրն էլ կայ... հա գլորվեր ցած, Մինասի քօռ բաղդ... Ինչ տուել ես ինձ՝ արի քեզ յետ տամ. օձիքս բաց թող։ Թող շունչ քաշեմ սկի չէ, մի հոգոց հանեմ... քիչ դադրեմ, էլի քշեր տար, էլի գլխի վրա բեր...

Ծախում էին Մինասի տունը։ Պէտք է ծախէին։ Պարտատէրը եկել գլխին կանգնել էր։

— Տներ է ուզում շինել։

— Երեք յարկից։

— Հա,—լրացրեց երրորդը,—քարն ու փայտն էլ պատրաստ ունի։ Գարնանից այս բոլորը քանդել կը տայ...—Եւ նա ցոյց տուեց գետնին կպած ծածկերի վրա։

— «Պարտքը տալով, մեղքը լալով»...պէտք է տար, պէտք է մինչև հիմա մարդու պարտքը տար... ծով է մեռաւոր... Ինչու մինչև օրս չէր տալիս։ Հոգին էլ դուրս գայ՝ պէտք է տայ... Մեռնողի համար էլ՝ մարդ Աստծուն է հաշիւ տալիս...

Ոմանք խոր հոգոց հանեցին։ Ամեն ինչ իրաւունք ունէր։ Նա սատանալիքների տէր էր միայն։

Պաշտօնեան զբաղված էր գրելով։ Մի րոպէից յետոյ կը սկսվէր աճուրդը, մի անհեռաքրքրաշարժ բան. գիտէին, որ մօտ եկող չի լինի և տունը կը մնայ Եղիազարի վրա։ Այդպէս էր նա սարքել բանը։

—Գնա, բալա ջան, գնա,—ասում էր Մինասը, ցած բերելով գրկից չորս տարեկան աղային,—գնա, արևի տակ կանգնիր, տաքացիր... քանի դեռ արևի վրա արգելք չեն դրել... Գնա, ձեռքերդ կապտել են, բալէս...

Համբուրեց որդու փոքրիկ, կուչ եկած ձեռքերը և երկու կաթիլ տաք արտասուք գլորեց նրանց վրա։

Միւսին պահեց գրկում։ Այսօր այդ երկուսը նրա խնամքին էին մնացել։ Կինը վեր էր ընկել լէշի պէս, երեսի վրա։ Նա կարողանում էր անիծել և վրնգվնգալ, բայց մեռնելը, երկու աղջիկը, լուռ էին՝ ձեռքները կրծքներին ծալած. դատապարտված՝ յանցաւորների նման։

Ցանցանքն ինչ էր. աղքատութիւնը։ Մի՞թէ աղքատ լինելն յանցանք է... Աղքատ լինել, բայց աշխատել, չը ծուլանալ։ Աշխատել տասնի չափ, տրորվել եզան նման։ Քրտնել... Չէ՞ որ քրտինքով վաստակած հացը օրհնված է... «Քո քրտինքով կուտես հացդ»... Բայց պատժելու համար այդպէս ասաց Տէրը... Տէրտէրն էլ ասում էր, որ եթէ Ադամն ու Եւան չը մեղանչէին՝ մենք հիմա առանց հոգսի ու նեղութեան կապրէինք. հրեշտակների նման... առանց քրտինքի։ Եւ նրանք քրտնում էին այնքան, որ վաստակած հացի փոքրիկ կտորը լողում էր քրտինքի աղի լճում մէջ... Եւ սոված էին մնում...

Նրանք զգացում սովորել էին... խեղճերը, թշուառները պէտք է ուրախանան, իսկ գողողները, ուժեղները՝ պատժվեն։ Ինչ լաւ էր. Նրանք փոքր էին, բայց դեռ այնքան թշուառ, խեղճ չէին, որ գողողների պատժի մասին էլ մտածէին։ Հիմա,—հիմա մտածում են, որ Եղիազարը կը պատժվի։ Մայրիկն էլ անիծում է... Արէ տես, որ խելքի մօտ բան չէ... Ցուրտը, քամին, ձմեռը—խեղճերի համար... Հիւանդութիւնները, տգիտութիւնը, մերկութիւնը—գարձեալ նրանց... Ամեն վատ բան հաւաքել նրանց են տուել... Այդ ամենը՝ խեղճութիւն է, աղքատութիւն է... Մեղք խօմ չէ... սպանել, թալանել խօմ չէ։

Մինչև այսօր հայրիկն էլ էր այդպէս ասում, մայրիկն էլ... Այսօր առաւօտ հայրիկն ասաց.—Իմ մեղքն է, աղքատ եմ, պէտք է տանջվեմ... Իսկ մայրիկը հակառակ ոչինչ չասաց։

— Ինչու պէտք է աղքատ լինէի։ Մեղաւոր եմ... Ինքը չէր ուզեցել հարստանալ կամ չէր կարողացել։

Եւ դրա համար էլ պատժվում է...

Նա մի բան էլ ասաց և հիմա մտքում կրկնում էր.

— Աստուած սովորաբար պատժում է նրանց, որոնք հալածում, կեղեքում են, յափշտակում, սպանում... Ինչպէ՞ս է պատժում։ Նրանով, որ նրանք լաւ հագնում, ուտում են, որ մինչև կոկորդը խրվում են հաճոյքների մէջ, որ ցաւը, քաղցը, մութը, լացը ինչեր են՝ չը գիտեն։ Մխիթարվիր, Մինաս... սրտիդ խեղ քսիր։

— Ապա իրանցն ասէր, թէ ինչ են մտածում, խեղճ մարդիկ... Եղիազարին ասա, ցոյց կը տայ պրիստաւին, կասի.

— Ահա այսպէս է մեզ պատժում Աստուած։ Թող ծափ տայ և պար գայ Մինասը։ Մի ժամից յետոյ ինքը կը թեթևանայ տնից-տեղից, իսկ Եղիազարի պատիժները վրա նորը կաւելանայ։

Նա ասաց.

— Աղա, պարոն պրիստաւ, վերցրու իրան տուր՝ պրծաւ գնաց... երկար-բարակ, երկար-բարակ... գրում ես, գրում... Մարդը էն գլխից, փող տալու օրից, աչքը դրել էր տիրանալու էս անտէր տեղին... Տուր իրան, տուր իրան տանի, վայելի...

— Մինաս Ղազարովի տունը երեք կտորից, թալէն, մարագը, բակը... Կայքը գնահատված է երեք հարիւր, պարտքն է հինգ... Ծախվում է Եղիազար Նիսօյեանի պարտքի դէմ։

— Ո՞վ է տալիս աւելի...—ու մտածմունքի մէջ ընկաւ կարծես։

— Երեք հարիւր գին են դրել... տեղն արժէ հազար։

— Կարգն այդպէս է։ Գակաս կը գնահատեն։

— Ո՞վ է գնահատել... Պարտքն ինչքա՞ն է եղել։

— Հարիւր... Չէ... Հարիւր յիսուն։

Այդքան էր հարկաւոր այն տարին, երբ Մինասի միակ օգնականը գինուոր պէտք է գնար։ Ցակորը այն փողերով տներ շինեց, հիմա Զինգերի համար բրէհով է տալիս։ Քիչ մարդ չը խաբեց նա։ Սալդաթը նոր էր, մարդը՝ խամ... գրագրի ձեռին ինչ իրաւունք կար։

Ասում էր.

— Տուր, կաղատեմ...

Ինքը մի գրագիր մարդ է։ Տղի աչքն էլ մղկտում, մաշում էր... գնացողը գնում էր, չը գնացողը՝ չէ։ Մինասի տղան խօմ պրտօնութիւն ունէր։ Ո՞վ էր խմանում, ո՞վ էր հաւատում... Փողը չէբը դրեց գրէր, գրէր...

Ցեռևյ։ Մեռաւ Արշակը. այն՝ քարից պինդ տղան ընկաւ մեռաւ։ Զինուոր չը գնաց, չը տարան... Այո, Մինասի քօռ բաղդը չը քանեց։ Մեռաւ, մեռաւ։

— Երեք հարիւր. աւելի տուող... Երեք հարիւր մէկ, երեք հարիւր երկու... երկու, երկու... Ո՞վ կը տայ աւելի... Ասում եմ՝ երեք...

— Տուող չեղաւ՝ քեզ վրա կը մնայ, Եղիա, եթէ ուզում ես վերցնել։

— Վերցնում եմ, աղա... չը վերցնեմ՝ ինչ անեմ։ Ձեռ թողնի խօմ փողս կորչի... Էլի մի մասը կը սաղանայ...

— Երեք հարիւր... երեք,—կարեց պրիստաւը և վերջացրեց։

II

— Մարդ, ձեռ ես գնում։

— Ո՞ւր չը գնամ։ Ձը գնամ... Ապա ձեռ գնամ։

Մինասը հագնվում էր. երկայնավիզ գուլպաներ, բրդէ ձեռնոցներ։ Ականջները փաթթում էր պլուխով, լայն գոտին պընդացնում։ Գիշերները սաստիկ ցուրտ է լինում ջրերի վրա, դեկտեմբերին... Ջուն կը գայ. թէ գայ—լաւ է։ Բայց պարզկայ է, աստղոտ. զզզան քամին փետացնում, կարկամեցնում է, դուրգել է շինում։

տեղ, ուր ամենացինիկ կերպով կարծես ուզում են ասել՝ «տուր փողը, քսակը կամ կեանքդ»,—տրագեդիաները կը լինեն անվերջ, կը դառնան ընդհանրական...

Հասարակական - քաղաքական այլանդակ կարգերի դէմ ըմբոստացողների ազատ ապրելու փափագը միշտ էլ մնում է վառ, կեանքի սէրը չէ թուլանում վերջին րոպէին անգամ։

Եւ նրանք մեռնում են այն գիտակցութեամբ, որ սիրում են կեանքը։

Սակայն այդ կեանքը նրանք սիրում են իրանց շրջապատից դուրս, իրականութիւնից հեռու, երեւակայութեան աշխարհում։

Լ. Դանիէլեան

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ՇՈՒՐՋԸ

—

Հոկտեմբերի 17-ի միութեան ֆրակցիան նիւթեր է հաւաքում հարցապնդում անելու Պետերբուրգի ոստիկանութեան գործողութիւնների մասին։ Լուրերին նայելով՝ Պետերբուրգի ոստիկանութիւնը ռեվիզիայի ենթարկելու պարտականութիւնը դրված է Կովկասի Փոխարքայի քաղաքացիական մասի նախկին օգնական սենատոր Կրիժ Գիրէյի վրա։ («Р. В.»)

Հոկտեմբերեան պատգամաւոր Գօդնեվը, որ նկատողութիւն էր արել բանուորին երկու զանապաններին աջակցութեամբ ծեծող քաղաքապահին, ամենակոպիտ կերպով ոստիկանատուն է տարվում։ Պատգամաւորական տոմսակի ներկայացնելը ոչ մի ներգործութիւն չէ ունենում։ Ոստիկանամասում նրան խելոյն արձակում են։ Այդ առիթով Գօդնեվը մտադիր է հարց զարթեցնել Դումայում։ Տեղական ոստիկանապետ Մակարեն ներողութիւն է խնդրել Գօդնեվից, միևնոյն ժամանակ նա անձամբ բացատրել է քաղաքապահներին, որ նրանք չը պէտք է մերժեն կողմնակի միջամտողներին իրանց համարն ու ազգանունը յայտնելու։

Կովկասի մասին հարցապնդում անելով հոկտեմբերեանները աջակողմեանների համաձայնութեամբ աշխատում են պաշտօնանկ անել տալ կոմս Վորոնցով-Դաշկովին։

Կոլիւբակինի գործի առիթով կազմված մասնաժողովը, որ մի շարք հարցերով դիմել էր արդարադատութեան մինիստրութեանը և պահանջել գործի վերաբերեալ հարկաւոր տեղեկութիւններ, պատասխան է ստացել, թէ որովհետև գործի քննութիւնը վերաբերում է բացառապէս դատարանին և ոչ մի առնչութիւն չունի Դումայի օրէնսդրական ֆունկցիաների հետ, ուստի մինիստրութիւնը իրան պարտաւոր չէ համարում պատասխանել մասնաժողովի հարցերին։ Այդ պատճառով մասնաժողովը հաւաքվել է քննելու գործի դրութիւնը։ Դումայում յամառ լուր է պտտում, որ հոկտեմբերեանները և մի քանի հոգի չափաւոր աջակողմեաններից մտադիր են միջնորդել, որպէսզի ներումն շնորհվի Կոլիւբակինին, և նոյնիսկ արդէն ստորագրութիւն են հաւաքում դրա համար։ («Р. В.»)

Ներկայումս Դումայի պատգամաւորները դեռևս սեսսիան չը վերջացած գնում են Պետերբուրգից, առանց ի նկատի առնելու աշխատանքների անյետաձգելիութիւնն ու կարեւորութիւնը, որի շնորհիւ գործը դանդաղանում է մասնաժողովներում։ Բացի դրանից իրանց բացակայութիւնների մասին պատգամաւորները ոչ միայն չեն հաղորդում պրեզիդիումին, այլ և ոչ ոքի չեն հաղորդում նոյնիսկ բացակայութեան ժամանակամիջոցի մասին։ Այդ հարցը կանոնաւորելու նպատակով մտադրութիւն կայ հարց զարթեցնելու՝ առանց Պետական Դումայի թոյլտուութեան բացակայելը արգելելու մասին։ Այն պատգամաւորները, որոնք առանց պատճառը մատնանշելու կը բացակայեն, բացակայութեան օրերի ռոճիկից պէտք է զրկվեն։ («Св. М.»)

Լուր է պտտում, որ կառավարութիւնը մի օրինագիծ է ուզում առաջարկել պատգամաւորներին տարեկան 3,600 րուբլի ռոճիկ նշանակելու մասին։ («Б.»)

ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՇՈՒՐՋԸ

—

Պետական Խորհրդի աջակողմեան խմբի լիդեր իշ. Կասատկին-Րօստովսկին ներկայացրել է Պետական Խորհրդի ամուրեան և ֆինանսական մասնաժողովին մի զեկուցում ամուրեան հարցի առիթով։ Զեկուցանողը պահանջում է կառավարութիւնից պատասխան տալ հետևեալ հարցերին. 1) Ինչպիսի դրութեան մէջ կը մնայ Նիկոլայեվսկը, որտեղից կարելի է ստանալ ետևից ամուրեան երկաթուղուն և Վլադիվօստոկին, 2) Ինչպիսի դրութեան մէջ կը մնայ Կամչատկան, որտեղ այժմից արդէն անօրինութիւններ են անում եապօնացիները, 3) մշակել է, արդեօք, մինիստրութիւնը ամուրեան և ծովափնեայ շրջանների պաշտպանութեան պլանը, 4) Ինչպէս են երկրի կլիման, հողը, անտառները և հանքային հարստութիւնները։ Մինչև այդ հարցերի պատասխան ստանալը, իշխանը հնարաւոր չէ գտնում ձեռնարկել երկաթուղու կառուցումը և անհրաժեշտ է գտնում յետաձգել նրա կառուցումը գոնէ մի տարի, իսկ մինչև այդ զբաղվել նրա մանրամասն ուսումնասիրութեամբ։ Այդ հանգամանքը մեծ աղմուկ է յարուցել շրջաններում։ («Р. Утро»)

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

—

Գանձակ, 1 մայիսի

Քաղաքային վարչութիւնը անցեալ դեկտեմբերին վերջացնելով իր բանակցութիւնը և պայմանները էլեքտրականութեան մասնագէտ և կապալառու Պեօտր Բայերմանի հետ՝ որոշում է քաղաքիս էլեքտրական լուսով լուսաւորելու գործը կապալով տալու նրան։ Քաղաքային վարչութիւնը անցեալ դեկտեմբերին այդ մասին դիմել է ներքին գործերի մինիստրին թոյլտուութիւն ստանալու։

Ինչպէս մեզ պատմեց պ. Բայերմանը, երէկ ներքին գործերի մինիստրութիւնից ստացվել է պատշաճաւոր թոյլտուութիւնը, և մօտ օրերումս Գանձակի բաղդաւոր փողոցները և աչքի ընկնող վայրերը կը լուսաւորվեն էլեքտրական հրաշալի լուսով։ Իսկ քաղաքիս մի յայտնի մասը, քանի որ բացակայում են կանոնաւոր փողոցները, դեռ երկար, շատ երկար ժամանակ զուրկ կը մնան կանոնաւոր լուսաւորութիւնից...

Ա. Սահակեան

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

—

Բաթում, 5 մայիսի

«Պարիզի շրջմոլիկը» 2 գործող. հեղ. Վանդէնբուրգի և «Եադ-Աստ» փոխվել հեղ. Ց. Ղազարեանի, որ խաղաց դերասան Մ. Ալիխանեանը երկաթէ թատրոնում մայիսի 3-ին տեղական սիրողների մասնակցութեամբ, անցաւ ոչ այնքան աջող։ Հաւաքվել էր թատրոն մեծ բազմութիւն, և մէջ ընդ մէջ նկատվում էին նոր-նոր մարդիկ, որոնք մեր հայկական ներկայացումներին՝ պատիւ չէին համարում յաճախելը։

Ներկայացումը տրվեց յօգուտ Լէօի։

Դերասան Մ. Ալիխանեանը խաղում էր «Պարիզի շրջմոլիկի» մէջ ժեներալի որդու՝ Ամիդէի դերը։

Միւս դերակատարների մէջ ամենաուժեղ, աչքի ընկնողներից մէկն էլ օր. Թ. Գիւրջեանն էր, որը խաղում էր Պարիզի շրջմոլիկ Ժօզէֆի՝ մի 11—12 տարեկան պատանու դերը, որը շատ աջող տարաւ։ Օրիօրդը միշտ և ամեն դերում բեմի վրա իրան զգում է ազատ։

Պ. Հ. Պաեանը, որ մշտական լաւ խաղացողներից է, այս անգամ էլ «Պարիզի շրջմոլիկի» և վօդևիլի մէջ՝ իր ստանձնած դերերում եռանդ էր մտցնում անսամբլի մէջ։

Ժեներալի դերում բնական էր պ. Ա. Մեջլումեանը, որ եթէ երբեմն-երբեմն յօղացանից շատ չը գանգատվէր ու շատ մաս չը գար, աւելի ուժեղ կը լինէր խաղը։

Իսկ միւս դերակատարներին խորհուրդ կը տայինք, նախ քան բեմ դուրս գալը, լաւ սովորէին դերերը և ապա դուրս գային։

Ներկայացման վերջում մեծ ոգևորութեամբ բեմ հրաւիրեցին պ. Ց. Ղազարեանին ու մի մեծ փունջ կենդանի ծաղիկներ նուիրեցին։

Վ. Մարտիրոսեան

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԴԱՀԼԻՃԻՑ

—

Մայիսի 2-ին կովկասեան զինուորական նահանգական դատարանում քննվեց Զաքաթալայի շրջանի Կախի գիւղի բնակիչներ Բախիշ Մամէդ-օղլու, Հասան-բէկ Գարունովի, Իսլամ Իսմայիլ-օղլու, Իրզա-Հաջի-օղլու և առաջին մեղադրեալի մօր՝ Նուրջահան Մահամմէդ-ղըզըս գործը, որոնք մեղադրվում են Նուխու բնակիչ Զախարիա Կուլի-օղլու սպանութեան և նրա գիւղը այրելու մէջ։

Զինուորական-նահանգական դատարանը, բացի Նուրջահան Մահամմէդ-ղըզըց, բոլորին մեղաւոր ճանաչեց յիշեալ յանցանքների մէջ և դատապարտեց մահվան պատժի կախաղանի միջոցով։ Բախիշ Մամէդ-օղլու վերաբերութեամբ դատարանը որոշեց միջնորդել գեներալ-նահանգապետի առաջ, որ մահվան պատիժը փոխարինվի տաժանակիր աշխատանքներով։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Երէկ, Նորին Մեծութիւն Թագաւոր Կայսր Նիկոլայ Ալէքսանդրովիչի ծննդեան օրը, Ալէքսանդրո-Նեվսկի զինուորական տաճարում Վրաստանի էկզարխը, պատարագից յետոյ, կատարեց գոհաբանական մաղթանք, որի ժամանակ Արսէնալի սարից արձակեցին սահմանված 21 թնդանօթները։ Մաղթանքին ներկայ էին Փոխարքայ կոմս Ի. Ի. Վորոնցով-Դաշկով, կոմսուհին, Փոխարքայի շքախումբը, գեներալիտէտը, զինուորական և քաղաքացիական բոլոր հաստատութիւնների ներկայացուցիչները և բազմաթիւ աղօթողներ։ Մաղթանքներ կատարվեցին նաև բոլոր օտարազգեան ազգութիւնների եկեղեցիներում, հայոց Վանքի աւագ եկեղեցում, հրէաների սինագոգում, մահմեդականների մզկիթում և այլն։ Քաղաքը առաւօտեանից զարդարված էր դրօշակներով, իսկ երեկոյեան հրավառութեան մէջ էր։

Թիֆլիսի պարսից գեներալ-հիւպատոսարանը «Зак.» լրագրին ուղարկել է հետևեալ տեղեկութիւնը. «Մի փոքր ժամանակ սրանից առաջ ռուսաց լրագրներում զանազան լուրեր տպվեցին այն դէպքերի մասին, որոնք տեղի ունեցան պարսից սահմանագլխում Բէլօսուարի մօտ։ Ինչպէս այժմ հաղորդում են հիւպատոսարանին պաշտօնական աղբիւրից, Բէլօսուարի մօտ պատահած դէպքը կայանում է հետևեալում։ 1908 թ. մարտի 30-ին կօզակներից մէկի ձին փախչում է պարսից սահմանը. մի օֆիցեր 7 կօզակներով դիմում է պարսից կողմը յիշեալ ձին գտնելու համար և, տեսնելով որ նա արածում է երկու շախսովանցիների ձիերի հետ միասին, առանց մի որևէ խօսակցութեան, սպանում են այդ երկու շախսովանցիներին։ Իմանալով այդ մասին, այդ տեղին մօտ գտնվող շախսովանցիները հրացանաձգութեան են բռնվում նրանց հետ, որի ժամանակ սպանվում են մի օֆիցեր և երկու կօզակներ։ Սահմանագլխային պահակախումբը, կօզակները, զինւորները, յարձակվելով պարսկական Բելօսուար, Զարգեար և այլ գիւղերի վրա, այրում են այդ գիւղերը և բնակարանները և սպանում են մօտ հարիւր մարդ։ Ինչպէս երևում է դէպքի տեղն ուղարկված պարսից պաշտօնեայի տեղեկութիւնից, շախսովանցիների կորուստները հասնում է մօտ 600,000 րուբլու։ Պարսից գեներալ-հիւպատոս Մօֆախամ-էս-Սալթանէ»։

Թիֆլիսի նահանգապետը տեղեկացրել է Կովկասի Փոխարքային, որ Թիֆլիս քաղաքի զօրամասերի, ինչպէս և գաւառական քաղաքների զօրախմբերի հրամանատարները շարունակ դիմում են իրան, գանգատվելով որ քաղաքային վարչութիւնները օֆիցերների և զինուորների բնակարանային փողերը չեն տալիս, միւս կողմից՝ քաղաքային վարչութիւնները իրանց վարմունքը արդարացնում են նրանով, որ քաղաքային գանձարկղներում փող չը կայ և պետական գանձատունն էլ զօրքերի բնակարանային ամենամեայ գումարները չէ տալիս։ Իր կողմից հաստատելով քաղաքային վարչութիւնների ասածները և նրանց գանձարկղների դրամական սուղ միջոցները, նաև շեշտելով զօրամասերի անյարմար և ճնշված դրութիւնը, նահանգապետը խնդրում է Փոխարքային, աջակցել որ պետական գանձարանը տայ քաղաքներին հասանելիք փողերը, որպէսզի սրանք էլ իրանց կողմից բաւարարեցնեն օֆիցերներին և զինուորներին։

Անդրկովկասեան երկաթուղիների վարչութեան մէջ այսօրվանից պարապմունքները սկսվելու են առաւօտեան ժամը 7-ից և վերջանալու են ցերեկվայ ժամը 2-ին, իսկ շաբաթ և տօների նախընթաց օրերը մինչև ցերեկվայ ժամը 1-ը։

Մայիսի 3-ին, հասարակական կլուբում, Ց. Փիրալեանը կարդաց մի ռեֆերատ Անդրկովկասի գիւղացիական տնտեսութեան ճգնաժամի մասին։ Ռեֆերատը առաջ բերեց եռանդուն վիճաբանութիւններ, որոնց մասնակցեցին Գ. Թումանով, Գ. Շահբուդաղեան, Դ. Բուզբաշեվ, Ն. Երմօլաեվ և ուրիշները։ Շուտով նոյն կլուբում կարդացվելու են հետևեալ ռեֆերատները. մայիսի 10-ին Գ. Շահբուդաղեանը կը կարդայ Անդրկովկասի երկաթուղային շինարարութեան մերձաւոր կարիքների մասին, մայիսի 17-ին Կ. Սիվկովը՝ Վէդեկինդի մասին, մայիսի 24 ին Ն. Երմօլաեվը՝ Մակսիմ Գորկու գրուածքների մասին։

Այսօր, Թիֆլ. ժող. ամառային շինութեան մէջ, յօգուտ Հաւլաբարի Էջմիածն. ծխակ. օրիորդաց դպրոցի, տեղի է ունենալու մայիսեան մեծ զբօսանք։ Ինչպէս յայտնի է, այդ դպրոցին փակման վտանգ է սպառնում, որի հետևանքը այն է լինելու, որ մօտ 150 աշակերտուհի դպրոցից դուրս են մնալու։ Զբօսանքին ձեռնարկողները յոյս ունեն, որ հասարակութիւնը անպայման կաջակցի իր ձեռնարկած գործին։

Մայիսի 3-ին Թիֆլիսի նահանգական դատարանի մէջ կայացաւ կովկասեան իրաւաբանական ընկերութեան ընդհանուր ժողովը Լեմէրմանի նախագահութեամբ։ Ս. Ղամբարեանը կարդաց իր ռեֆերատը «Ազատութեան կամքի մասին»։ Ներկայ էին մօտ 15 անդամ և շատ քիչ հանդիսականներ։

Առաջիկայ ուրբաթ, ամսիս 9-ին, երեկոյեան ժողովարանի դահլիճում հայոց ազգագրական ընկերութեան նախաձեռնութեամբ Սիմէօն Ցակոբեանը դասախօսելու է Խաչատուր Աբովեանի գրական և հասարակական գործունէութեան մասին, նրա ծննդեան հարիւրամեակի առիթով։

Թիֆլիսում ստացված տեղեկութիւնների համաձայն, Մեծ Թիոնէթ գիւղում և նրա շրջակայքում մօտ օրերս ուժեղ կարկուտ է եկել, որ շատ ցանքսեր է ոչնչացրել։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Մայիսի 5-ին Սօլդատսկի բազարում ձերբակալել են Միտրոֆան Լաշկօյին, որը խաբեբայութիւնով ոսկու փոխարէն ծախելիս է եղել պղնձէ մատանիներ։ Ցանցաւորը դատի է ենթարկված։

Մայիսի 5-ին, առաւօտեան ժամը 10-ին, Պաւշկինսկայա փողոցով անցնող Շ. Տետրուաշվիլուն մօտեցել է մի անյայտ երիտասարդ և պահանջել է մահվան սպառնալիքով 10 րուբլի։ Անյայտին ձերբակալել են, որը եղել է, ինչպէս պարզվել է, Իվ. Ջելիձէն 23 տարեկան։ Քննութիւն է կատարվում։

Մայիսի 5-ին, առաւօտեան ժամը 9-ին, մի անյայտ երիտասարդ Մեչեթի կամուրջի մօտ ատրճանակից 1 անգամ կրակել է Գիւլ Մամեդ Ջաֆար-օղլու ետևից, բայց վրիպել է։ Կրակողին տեղն ու տեղը ձերբակալել են։ Ձերբակալվածը եղել է Օզուրգէթի գաւառի բնակիչ Իվ. Կալանդաձէն։

Մայիսի 5 ին, երեկոյեան ժամը 5-ին, Արսենալի կամուրջի մօտ շանտաժիստներ Հայկ և Գէորգ ատրճանակի հարուածներով թեթև կերպով վիրաւորել են աջ և ձախ ոտքերից շանտաժիստ-էքսպրօպրիատոր Ստեփան Սուասնովին։ Վիրաւորվածին տարել են հիւանդանոց։

ԲԱԳՒԻ ԼՈՒՐԵՐ

Թէ ինչպիսի բարքերի նմուշներ են ցուցադրում տեղական խանութպանները, կարելի է գաղափար կազմել հետևեալ բնորոշ դէպքից։ Մի ինչ-որ ռուս կին՝ տ. Մարկօվիչ մտնում է 2-րդ Կանիտափինսկայա և Ստանիսլավսկայա փողոցների անկիւնում գտնվող Յակոբ Տէր-Սեւանեսովի մսի խանութը և խնդրում է ֆիլէյի համար 3 ֆ. միս տալ իրան։ Մսավաճառը, փոխանակ մի ամբողջ կտորի, տալիս է 1 և կէս ֆ. ֆիլէյի մասից, 1 և կէս ֆ. էլ ուրիշ զանազան մասերից և պահանջում է վճարել 17 կոպ. ֆունտին։ Երբ տ. Մ. հրաժարվում է վերցնել այդ միսը, մսավաճառը զայրանում է և սկսում հայհոյել, բայց նա չէ բաւականանում միայն դրանով, բռունցքի մի հարուածով գետին է գլորում դժբաղդ կնոջը։ Այդ վայրենի դէպքի համար կազմվել է արձանագրութիւն։ Տ. Մ. մտադիր է նոյնիսկ գանգատվել քաղաքապետին, և, ի հարկէ, յանցաւորը կը պատժվի։ Պէտք է նկատել, որ այդպիսի վիրաւորական դէպքերը սովորական երևոյթ են դարձել տեղական կեանքում, փողոցային հայհոյանքներն ու լկտի վերաբերմունքները մանաւանդ կանանց սեռի հետ կրկնվում են յաճախակի։ Ոստիկանները գոնէ իրանց շահերի տեսակէտից պարտաւոր են ամենախստաբարոյական քաղաքավարութիւն պահպանել։

Դումայի որոշման համաձայն, քաղաքային վարչութիւնը ձեռնարկում է բերդի մէջ գտնվող մի քանի փողոցները ընդարձակելու։

Տեխնիկական դպրոցի դիրեկտորը տեղեկացրել է քաղաքային ուսումնարանական մասնաժողովի նախագահին, որ քաղաքային թոշակաւորները՝ տեխնիկական դպրոցի աշակերտներ Մուխտար Ղասըմովը, Խորէն Ստեփանեանցը, Միքայէլ Ջաւելովը և Գրիգոր Շամիրեանցը աւարտել են դպրոցը, ուստի և 4 նոր թոշակաւորներ պէտք է նշանակել դպրոցում։

Բագուի քաղաքապետի կարգադրութեամբ, ոստիկանապետ Վ. Շերվուտը կազմել է ցուցակ դռնապանների պահակատեղերի մասին։ Դրա համաձայն մայիսի 1-ից դռնապանների շտատը գործածութեան մէջ է մտնում. Բագուի ոստիկանութեան շրջանում ծառայող դռնապանների ընդհանուր թիւը հասնում է 1746 հոգու, որոնք բաժանված են զանազան ոստիկանամասերի վրա։ Ամեն մի պահակատեղում նշանակվում են երեք դռնապան, որոնք և իրար պէտք է հերթով փոխարինեն։ («Б.» «Кс.»)

— Է՛, Դէհ, սաս, Գէվօյի աղջիկ, ծուր չը գնամ... Տեսնողն էլ կասի թէ վրաս եափնջի կայ։ Եափնջու նման է... Հի՛ն կապամաղ է դառել։

— Մա՛րդ, քանի՞ գնաս... Մինչի լուսանում է՝ կէս-մարդ ենք դառնում, հալումաշ, կէս-մարդ, մա՛րդ...

— Սոված փորի համար մութն էլ չէ վրա գալիս շուտով... Ամեն օր իրար հետ էլի էն բանն ենք խօսում...

— Մի գիշեր էլ մի՛ գնա. փորձանք է, ամեն օր չի գալ... Էս գիշեր...

Ամեն երեկոյ կինը այդպիսի փորձեր էր անում տանը պահելու Մինասին։ Բայց Մինասը գնում էր և առաւօտեան դառնում, յոգնած, գո՛ւն։

— Գէվօյի աղջի՛կ, չը սպանեցին։ Այսօր, ափսոս, քիչ էր։ Երեք րուբլու կը լինի։

— Վաղը տասի կը բռնեմ...

— Կրակի՛ մէջ, արնի՛ մէջ,—շշնջում էր կինը, ձեռքերը ծալում և սուս մնում։

Վտանգաւոր էր Մինասի նոր աշխատանքը։ Գետի ամբողջ տարածութեան վրա դրված էին զինված պահապաններ։ Այդ տարի արգելված էր ձուկը որսալ, որ բազմանար։ Իսկ շուկայում նոր ձուկը միշտ ճարվում էր և բեռնելով դուրս էր գնում։ Ցերեկը երեխաներն էլ չէին կարող ափին շարժվել, պահապանները միմեանց վրա աչք ունէին դրած։ Գիշերները կեանքի և մահվան հարց էր դրվում, եթէ ձկնորսը աշխատում էր խոյս տալ կաշառք տալուց, ուղղակի զոռով էր որսում։ Հանդիպում էին միմեանց, ուժերը չափում ու բաժանվում խաղաղ։ Ուժեղը ձուկն էր որսում, թոյլը որսվում էր ինքը, կամ մեծ փայը պահապանին տալիս։ Աւելի յաճախ կռիւ ծագում էր երկու որսողի, երկու խմբակի մէջ։ Կռւում էին տեղի վրա, կռւում էին՝ միմեանց ձեռքից խլելու աւարը։ Երբեմն այդտեղ լուծվում էին հին վրէժներ։ Ոսոխը իր ձեռքն էր բարձրացնում կամ պահապանին վարձում... Երբեմն անմեղն էր գնդակի տակ ընկնում, նպատակի տեղ կարծվելով։

— Սպանո՞ւմ են,—ամեն անգամ հեգնում էր կնոջը Մինասը, [illegible] բան չէ՞, կը սպանեն։ Ով ուժեղ [illegible] է... Ցեառոյ չափում է, ձեւում, [illegible] թիւը մասերի են բաժանել, [illegible] են, որ համարածից չը պակսի... ձուկը։ Կորեկն էլ հաշուեն, էլի ինչքա՜ն է թռչունը, գորտը, օձը ուտում։ Համբերիր, հերթը կը գայ սրանց, սրանց էլ ապրուստից կը զրկեն... Էլ չենք ասի. նայեցէք երկնքի թռչուններին... Կապալառուն վարում-վարարում է գետը, մինչև վերջին մողէսի դուրս գալը... ցնում կողովները և ուղարկում ուտողներին։ Մենք գարու հացով ու ծածիկով կը կշտանանք...

— Աշխարհը որ տաս՝ կուտեն։ Տներ է շինում, երեք յարկից։ Մեր մեռած գերանները... սիւները... տեսայ, որբի նման երեսս էին նայում։

Մինասի նոր զբաղմունքը օրէ-օր վտանգաւոր և օրէ-օր արդիւնաւոր էր դառնում և նոր մտքեր էր ծնեցնում նրա մէջ։

— Սա հալալ է, հալալ աշխատանք. դուք նամարդութիւնով էք տիրացել, մենք տղամարդութիւնով խլում ենք ձեր ձեռքից, կուրծք ենք դէմ անում։ Դուք ի՞նչ էք տըւել.—փո՛ղ... Ծամ փողը։ Երկինքը վկայ, կնի՛կ, օրս քօռ է, քօռ եմ անցել. ձեռքս մահին, կուրծքս գետնին, փորսող տալով, տրորվելով, գալարվելով... Էլի վերև եմ նայել, որ անձրև գայ, կարկուտ չը գայ, խանձը չայրի, քամին չը քշի։ Ու՛ մի փոր հաց. հացից բացի ի՞նչ. այն էլ մի կտոր հողից։ Սրանց տես. արտեր ունեն տասը տեղով, խանութներ. հանքեր են վերցնում, անտառներ, գետեր։ Ինչ ճամբին պատահում է՝ կուլ են տալիս։ Հիմա հասարակի մէջ ընկար—տասամ պէտք է ճարես...

Կինը համաձայնվում էր։ Նա այդ ամենը դիւէր, բայց դեռ մարդու նման չէր մտածել։ Աղջիկները մօրից աւելի էին թափանցում հօր խօսքերի մէջ։

— Ինչո՞ւ պէտք է մեզ տղայ չը ծնէիր... Օ՜, նրանք մենակ չէին թողնի հօրը։ Եռանդը բորբոքվում, վառվում էր նրանց սրտերում և ծանր հոգոցով հանգչում։

— Եղիազարի գլուխը չոմքի վրա պէտք է ջախջախէինք։

— Ցեառոյ,—ասում էր մայրը։

— Ցեառոյ կը փախչէինք սարերը. այնտեղից տասար, ձի կը քշէինք, դաշտը կը զադայինք։ Մենք էլ այդպէս կապրէինք։

— Բաս մե՞նք. ես, հայրդ, պատիկները...

— Դուք կը մնայիք տանը. մենք ձեզ այնքան փող կը բերէինք... այնքա՜ն... Մի օր էլ չորս ձիով կը գայինք, երկուսին մենք, երկուսին դուք կը հեծնէիք, երեխէքին կը դրէինք ու կը գնայինք... ուրիշ քաղաք, ուրիշ երկիր...

Մայրը չէր զսպում արտասուքը։ Ամեն օր, եկեղեցի գնալիս, նա անցնում էր իրանց նախկին տան մօտով։ Այժմեան բնակարանը թւում էր նրան իբրև մի խորթ մայր, որի հետ պէտք էր երկար տարիներ ապրել, մինչև առաջ կը գար մի տեսակ հոգեկան մօտիկութիւն։ Իսկ այնտե՜ղ... պատերի, գերանների մուրը... քանի՜ տարվայ մուր։ Եւ այրված բոլոր աթարը նա իր մէջքով էր դուրս կրել թաւլից, մեծ, ծանր կողովներով։ Ճկռելով՝ մէջքը դէմ էր տուել, իսկ երեկոյեան երկունքի ցաւ էր քաշել, տնտրտունջ, անբողոք. միայն հարևաններն են նախատել, որ վերջին օրը պէտք է հանգիստ մնար։ Իսկ նա, մի շաբաթ դեռ չանցած, դարձել ոտի վրա, դարձել կողով... Ցեառոյ—լուացքն ու խմորը, մուրն ու շմոլը, կալն ու էրանը... աշխատող տաւարի պէս։

Ու ասում էր մարդուն.

— Բաս պէտք է քանդի՞ էլի... Գարունն եկաւ. Քարը բերել է, պէտք է քանդի։ Քարերի տակը մնայ բարով՝ բան չեմ ասի. վիզը կոտրվի... Ո՞ւմ տներն է շինում... Բաս Աստուած չը կա՞յ։

— Սուս կաց, կնի՛կ, երբ պէտք է խրատվես։ Ջուրի բան չէ՞. հա՛յց, մենք էլ կը շինենք։ Մի կտոր հող կառնեմ, չորս պատ կը գնեմ, կը ծածկեմ, պրծաւ գնաց։

— Կարելի է յետ տայ, մարդ. յետ չի՞ տայ... քան փողը տաս՝ նոր հող առնես...

Այս հարցի մէջ նրան մաշում էր դարձեալ այն միտքը, որ կեղեքիչի ձեռքը գետնի երեսից վերան կանի իր օջախը։

— Հա՛... էլի Ձիգարիս վրա աղ ես դնում։ Կնի՛կ, կնի՛կ, քեզ ասում եմ՝ ցաւդ տաամդ քաշիր, իմս էլ ժամ մի՛ տուր...

— Զատկից յետոյ կը քանդի,—մրմռնջով և անհանգիստ ասում էր կինը։

III

Ասում էին, որ այդ ձմեռ Մինասը բաւականին փող աշխատեց։

Ցեառոյ ասողն էլ, լսողն էլ աւելացնում էր.

— Տա՛յ Աստուած, տայ Աստուած. խեղճ մարդ է, թող կառավարվի... երեխէքը մեծ են։ Ուզում էին հաւատացնել, թէ սկի չեն նախանձում. իրանք էլ լաւ օրի չէին։ Նեղված, չքաւոր մարդը իր քթից դէնը չէ տեսնում և իր նմանի աջողութիւնը խփում է նրա ամենազգայուն տեղին։—«Մեր հալին մնա, մեզնից առաջ մի՛ անցիր»... Կարծես թէ նախախնամութիւնից սահմանված մի կարգ է խանգարվում։ Եւ կարծես թէ իրանք իրաւունք չունեն երջանկութեան, դատապարտված են։ Ու աշխատում են ամենայն սրբութեամբ պահպանել այդ դատավճիռը։

— Բոլորը հարուստ լինեն՝ ո՞վ քեասիբ կը լինի,—շուարած հարցնում էին նրանք։—Այսօր Մինասը հարստացաւ, վաղը՝ Սու-

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿԵԱՆՔԻՑ

Պետերբուրգի նահանգական դատաստանում առաջիկայում քննվելու է դատավարական տարեգրութեան մէջ մինչև այժմ չը տեսնված մի գործ, որը զարմացրել է Պետերբուրգի գիմնազիաներից մէկի կրօնուսոյցը՝ Եակով Ս. քահանան։ Անցեալ տարի մայիսի 10-ի գիշերը նա գնալով տեղական ոստիկանատունը յայտնել է, որ իրան Գրիգորևյա ազգանունով մի պոռնիկ կնոջ բնակարանում կողոպտել են և խլել իր մօտ եղած ոսկէ կրծկալ խաչը, ժամացոյցը իր շղթայով և փողի քսակը, որի մէջ եղել է 60 րուբլի։ Քահանայի գանգատը խիզոյն ստուգել են, և պարզվել է, որ գիմնաւոր են նրա ասածները։ Քահանայի պահանջի համաձայն արձանագրութիւն է կազմվում դէպքի մասին և գործին օրինական ընթացք է տրվում։ Կրծքի խաչը, ժամացոյցը և փողերը գտնում են կողոպտողների մօտ և վերադարձնում տիրոջը։ Կողոպտիչները եղել են ինքը Գրիգորևյան և նրա հարևանները՝ երկու կասկածելի անձնաւորութիւններ՝ Բարտօլսով և Գօլուբօվ։ Պատասխանատուութեան ենթարկված Գրիգորևյան իրան արդարացնելու համար յայտնել է, որ ստիպված է եղել կողոպտել հայր Ս.-ին, որովհետև նրանից չէ ստացել պայմանաւորված վարձատրութիւնը և խմած գինու արժէքը։ («Р. У.»)

Ժողովրդական լուսաւորութեան դեպարտամենտը տեղեկացրել է ուսումնարանական շրջանների հոգաբարձուներին, որ ուսումնարանական կօմիտէտի կարծիքի համաձայն՝ տղայոց գիմնազիաների և ռէալական դպրոցների աշակերտներին դատաստանական նիստերը յաճախելու իրաւունք տալու հարցը Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան կողմից բացասական լուծում է ստացել։

Սամարայի բանտում հսկայական աննդադուլ են յայտարարել բանտարկեալները։ Պատճառը համարվում է այն, որ վարչութիւնը յայտարարում է այցելուներին՝ թէ այսուհետև բանտարկեալների համար բերված մթերքներից կընդունվեն միայն թէյ ու շաքար։ Կարճ ժամանակից յետոյ յայտարարվում է, որ «այլևս ոչ մի մթերք էլ չէ ընդունվելու»։ Երբ այդ նոր կարգերի առիթով բանտարկեալներից մէկը ուզում է բացատրվել բանտապետի հետ, նրան նստեցնում են կարցեր։ Վերջին կաթիլը այդ է լինում։ Բանտարկեալները դիմում են բողոքի միակ միջոցին՝ աննդադուլին, և նախ՝ 128 հոգի քաղաքականներից, ապա արդէն բոլոր 616 բանտարկեալները միասին հրաժարվում են սնունդից, գերադաս համարելով մահը՝ մարդկային իրաւունքներից զրկվելուց։ Ապրիլի 22-ին աննդադուլ անողներից արդէն 20 հոգի չէին վեր կենում իրանց մահճակալների վրայից։ Ապրիլի 21-ին բանտարկեալների ազգականները հեռագրով գանգատվել են Ստօլիպինին՝ բանտապետ Լեբեդևի այդ խստութիւնների դէմ. բացի դրանից քաղաքական բանտարկեալների ազգականները տեղական նահանգապետին ներկայացրել են մի գանգատ 60 հոգու ստորագրութեամբ։ («Волж.Сл.»)

Անցեալ շաբաթվայ ընթացքում մի շարք խուզարկութիւններ են կատարվել Պետերբուրգի մանր տպարաններում։ Նրանցից մի քանիսը փակված են, գրաւված են մօտ 200,000 օրինակ բրօշիւրներ, որոնց թւում նաև Վերխօյանցեվի «Ռուսաց Պատմութիւնը»։ («Слово»)

Ապրիլի 28-ի գիշերը Сампыковка կալուածքում կալանաւորված է բանւորական ժողովը։

Պետերբուրգում ապրիլի 25—27-ը բազմաթիւ խուզարկութիւններ են կատարվել. կալանաւորված են՝ գրականագէտ Իւր. Համենիչ, ժուռնալիստ Գօլդենբերգ, գրականագէտ Մ. Մօրօզով, որի մօտից տարել են 900 օրինակից աւելի թոյլատրված գրքեր, սեփական ձեռագրերը, իսկ արգելված ոչինչ չեն գտել։ Կալանաւորված է նաև հրապարակախօս Պ. Իւշկևիչը։ («Св. Сл.»)

Պատասխանատուութեան է ենթարկված Միխայիլ Պալօվիչը, որ յայտնի է Պետերբուրգին Վօլօնտեօր պսեվդօնիմով։ Նա մեղադրվում է «Սօցիալիստական շարժումը Եւրօպայի Արևմուտքում» բրօշիւրը հրատարակելու համար։ («Св. Сл.»)

Մօսկվայի նկարչական դպրոցում 38,000 րուբլու վատնումն է կատարվել։

Կանանց ընկերութեան վարչութիւնը, բազմաթիւ գրութիւններ ստանալով, որ I համառուսական կանանց համագումարը անյարմար ժամանակ է նշանակված (յունիսի 1-ին), յայտարարում է, որ համագումարը յետաձգվում է ներկայ տարվայ դեկտեմբերի 10-ին։ («Св. Сл.»)

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱ

Նիստ մայիսի 5-ի

Նիստը բացում է իշխ. Վօլկօնսկին ժամը 11 և 11 րոպէին։ Կարդացվում է օրակարգը։

Հերթում դրված է ներքին գործերի մինիստրութեան նախահաշուի առանձին համարների քննութիւնը։

Առանց վիճաբանութիւնների ընդունվում են պայմանական գումարյատկացումների վերաբերեալ բիւջէտային մասնաժողովի եզրակացութիւնները։

Դուման անցնում է սովորական ծախքերի բաժնի քննութեան։

Կենտրոնական հաստատութիւնների պահպանման համար 1,568,602 րուբլի յատկացնելու վերաբերութեամբ (№ 28) Աջէմեանը քննադատութեան է ենթարկում արդիւնաւոր և ոչ արդիւնաւոր պէտքերի համար որոշված գումարների անհամաչափ բաժանումը և խօսում է գլխաւորապէս գրաքննիչ ատեանի յետադէմ գոյութեան դէմ։

Եֆրեմօվ 2-րդը յայտնում է, որ առաջադիմականների խմբակը չէ համակրում ոստիկանական վարչութեան պահնորդական բաժինների և գրաքննիչ ատեանի գործունէութիւնը, սակայն, ընդունելով որ այդ պէտքերի համար նախահաշուով որոշված գումարները հիմնված են լէգալ տիտղոսների վրա, առաջադիմականների խմբակը ձայն կը տայ յօգուտ այդ գումարների ընդունելուն. բայց այդ ձայնատուութիւնը չի վկայի թէ խմբակը հաւանութիւն է տալիս այդ ծախքերին, այլ որովհետև նրանք համապատասխան են օրէնքներին։

Շինգարեօվը ասում է, որ կադեթները, ընդունելով այն տիտղոսների լէգալ լինելը, որոնք գումարները հիմնում են ոստիկանութեան և գրաքննութեան վրա, բայց և այնպէս այդ պէտքերի համար նշանակված փողերը աննպատակայարմար համարելով՝ ձեռնպահ կը մնան ձայնատուութիւնից այդ գումարների քուէարկութեան ժամանակ։

Վիճաբանութիւնները սպառված են. № 28-ը ընդունվում է։

Տեղական հանրա-վարչական հաստատութիւնների պահպանման համար 7,298,192 րուբլի յատկացնելու վերաբերութեամբ (№ 29) Աջէմեանը, առարկելով Պուրիշկևիչին, առաջ է բերում Կովկասի Փոխարքայի ամենահպատակ զեկուցագիրը, որը վկայում է, որ հայ ազգաբնակութիւնը հաւատարիմ է Թագաւորին և Ռուսաստանին։

Նեսելօվիչը՝ Պրիբալտեան երկրի Դումայի երեք անդամների լիազօրութեամբ առաջարկում է այս տարվայ յուլիսի 1-ից վերցնել երկրում յայտարարված բացառիկ դրութիւնը և դրա հետ միասին նախահաշուի գումարները պակասեցնել 12,000 րուբլով, որ անում է Պրիբալտեան երկրի ժամանակաւոր գեներալ-նահանգապետի տարեկան ռոճիկի կէսը։

Բարօն Ֆելկերզամը կարծում է, որ բացառիկ դրութիւնը սկի էլ չէ խանգարում երկրի խաղաղ ազգաբնակութեանը, ընդհակառակն՝ նպաստում է երկրի գործունէութեան զարգացմանը, լինելով անհրաժեշտ միայն յեղափոխականների համար և անհաճոյ՝ այն կարծիքի կողմնակիցների համար, թէ՝ ոչ թէ զինւորական դրութեամբ, այլ բարենորոգումներով է ձեռք բերվում երկրի հանդարտութիւնը։ Բարօն Ֆելկերզամին ընդդիմախօսողները, չը բացասելով բարենորոգումների անհրաժեշտութիւնը, գտնում են, որ կառավարութիւնը պէտք է մի ձեռքով նրանց գործադրէ, իսկ միւս՝ երկաթէ ձեռքով պէտք է զուգընթացօրէն ճնշէ յեղափոխութիւնը, որը Պրիբալտեան երկրում թէև մեղմացել է, բայց և այնպէս դեռ կենդանի է. (ծափահարութիւն աջակողմում, սուլոց ձախակողմում)։

Նեսելօվիչը ընդգծում է, որ երկրի գերմանացի ազգաբնակութիւնը, որ ըստ բարօն Ֆելկերզամին, կազմում է ամբողջ ազգաբնակութեան միայն 6%-ը, այդպիսով բացառիկ դրութիւնը վերցնելու ցանկութիւնը բղխում է ազգաբնակութեան ահագին մեծամասնութիւնից։ Նեսելօվիչը և Պրիբալտեան երկրի Դումայի միւս անդամները վկայում են, որ երկիրը բոլորովին խաղաղվել է, բացառիկ դրութեան գոյութիւնը, որ,նրա կարծիքով, ոչ թէ յեղափոխութեան դէմ կռւի միջոց է, այլ ուղղված է սոսկ ազգաբնակութեան դէմ, անհրաժեշտ է (?)։

Բարօն Ֆելկերզամը վերստին պնդում է, որ լօյալ ազգաբնակութեան տեսակէտից Պրիբալտեան երկրում զինւորական դրութեան պահպանելը անհրաժեշտ է (ծափահարութիւն աջակողմում, սուլոց ձախակողմում)։

Վիճաբանութիւնները սպառված են. № 29-ը ընդունվում է։

Ընդունվում է նաև յետագայ № 30-ը. տեղական ոստիկանական հաստատութիւնների պահպանման համար յատկացվում է 51,123,616 րուբլի։

№ 31-ը՝ ոստիկանական պէտքերի համար 8,166,598 րուբլի յատկացնելու մասին, Աջէմեանը ընդունելով մի քանի ծախքերի գոյութեան անհրաժեշտութիւնը, որոնք չեն յայտարարվում, կարծում է, որ նրանց հաստատող տիտղոսները այնքան պակասաւոր են, որ սահմ.-ռամկավարները չեն կարող իրանց ձայն տալ այդ գումարներին։

Մինիստրի օգնականի ճառից յետոյ № 31-ը ընդունվում է։

№ № 32 և 33-ը՝ տեղական բժշկական վարչութեան պահպանութեան համար 1,754,407 րուբլի և բժշկական ու ոստիկանական մասերի զանազան ծախքերի համար 1,589,191 րուբլի յատկացնելու մասին ընդունվում են առանց վիճաբանութիւնների։

№ 34-ը՝ տեղական անասնաբուժական վարչութեան համար 1,979,547 րուբլի յատկացնելու մասին՝ ընդունվում է Տիմօշկինի առաջարկած բանաձևով, որ ժանտախտի դէմ կռւելու կանոնները վերաքննութեան ենթարկվեն։

№ 35-ը՝ գիւղացիական գործերի տեղական հաստատութիւնների պահպանման համար 10,373,060 րուբլի յատկացնելու մասին՝ ընդունվում է։

Ժամը 1 և 8 րոպէին յայտարարվում է ընդմիջում։

Նիստը վերսկսվում է ժամը 2 և 15 րոպէին։

№ 36-ը՝ շինութիւններ վարձելու և պահելու համար 1,379,303 րուբլի յատկացնելու մասին՝ ընդունվում է առանց առարկութեան։

№ 37-ի վերաբերութեամբ—վարչութեան զանազան ծախքերի համար 2,707,473 ր. յատկացնելու մասին, Աջէմեանը կարծում է, որ այդ գումարի մէջ անցեալ տարիների պարտքերը վճարելու համար մացրած 240,000 րուբլին պէտք հանվի և առանձնացվի առանձին օրինագծով։

Աջէմեանի առաջարկութիւնը պաշտպանում են Եֆրեմօվ 2-րդը և Կօվալենկօ 2-րդը. դէմ են զեկուցանող Գօլօլօբօվը և Վեռշինին։

№ 37-ը՝ ընդունվում է։

№ 38-ի վերաբերութեամբ—վարչութեան վերաբերեալ զանազան ծախքերի համար 1,040,147 րուբլի յատկացնելու մասին—Աջէմեանը մատնանշում է, որ այդ համարումն էլ կան այնպիսի ծախքեր, որ պէտք է նախահաշուից դուրս հանել։ Առարկում է Վեռշինինը։

№ 38-ը ընդունվում է։ № 39-ի վերաբերութեամբ—բարձր կրթական հաստատութիւնների պահպանման համար 189,141 ր. յատկացնելու մասին—(պակաս) առաջարկվում է յիշեալ գումարը իջեցնել 119,392 ր.։

№ 39-ը՝ ընդունվում է։

№ 40-ը ընդունվում է 145,892 րուբլի գումարով։

№ 41-ը՝ ստորին կրթական հաստատութիւնների պահպանման համար 8827 ր. յատկացնելու մասին, ընդունվում է առանց վիճաբանութիւնների։

№ 42-ի վերաբերութեամբ—կրթական-գեղարուեստական մասի նպաստի համար 286,845 րուբլի յատկացնելու մասին—Տիմօշկինը ցանկութիւն է յայտնում, որ՝ «ուշադրութեան առնելով որ ռուսաց թատրոնական արհեստը պէտք է ազգային-հայրենասիրական գաղափարների առաջնորդը հանդիսանայ, Դուման համոզված է, որ ներքին գործերի մինիստրութիւնը միջոցներ ձեռք կառնի և թոյլ չի տայ ռուսաց բեմի վրա հակահայրենասիրական և սրբապիղծ պիէսներ ներկայացնել»։

Այնուհետև Տիմօշկինը պատմում է, թէ ինչպէս Թիֆլիսի արքունական թատրոնում հնար չեղաւ ներկայացնել «Жизнь за Царя» պիէսը։

Տիմօշկինի ցանկութիւնը № 42-ի հետ ընդունվում է ձայների առաւելութեամբ (118-ով ընդդէմ 104-ի)։ № № 43, 44 45, 46 և 47՝ գիւղատնտեսութեան հողային բարեկարգութեան վերաբերեալ սահմանաչափ աշխատանքների համար 142,000 րուբլի, ծովային և ցամաքային հաղորդակցութեան ծախքերի համար 171,892 րուբլի, շինութիւնները վերանորոգելու և նորերը կառուցանելու համար 649,000 րուբլի, զանազան պէտքերի համար 167,677 րուբլի, պետական գանձարանի ձեռքն անցած կալուածքների համար իբրև վարձատրութիւն տալու 52,233 րուբլի յատկացնելու մասին, —ընդունվում են առանց առարկութեան։

№ 48-ի վերաբերութեամբ—եկեղեցական վարչութեան կենտրոնական հաստատութիւնների պահպանութեան համար 122,263 րուբլի յատկացնելու մասին—խօսում են Մացիէվիչ քահանան, Միտրօֆան եպիսկոպոսը, Գրլէցկի քահանան, ներքին գործերի մինիստրի օգնականը, զեկուցանող Գօլօլօբօվը, որից յետոյ ընդունվում է։

Ընդունվում են նաև միւս համարները։ («Հ. Գ.»)

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թաւրիզ, 27 մարտի

Վանի դէպքերը որպէս ամենամեծ ապացոյց կարող են ծառայել մեզ, խորհրդածելու համար թէ ինչպիսի յեղափոխութիւն ունենք հայերս և թէ միաժամանակ համերաշխութեան փողահարները, որոնք իրանց ազգակիցների հետ համերաշխել չը կամեցան, ինչպէս են շահագործում համերաշխութիւն բառը, կեղծ ու պատիր, սուտ ու յերիւրած լուրերով, յօդուածներով թոզ փչում միամիտ, կամ ակամայից համակերպող ընթերցողների աչքերին։ փողհարները շարունակ լուրեր են հաղորդում Թիւրք և հայ համերաշխութեան մասին և կարծել տալիս, որ այսօր կամ վաղը այդ համերաշխութեան շնորհիւ Թիւրքիան արքայութիւն կը դառնայ, ուր գայլը և գառը միասին կարածեն։ Երանի չէր այդ երազը բարին կատարվէր ոչ թէ այսօր՝ վաղը, այլ նոյնիսկ երկար տարիներից յետոյ...

Դիերցի Դաւիթը դաւաճանեց։

Ի՞նչպիսի յեղափոխական է եղել դաշնակցական անօրինակ մատնիչը, որը, ինչպէս խօսվում է, չը հանդուրժելով իր նշանածի առեւանգման, անպատուութեան, փոխանակ ուրիշ միջոցներով գոհացնելու իր վրիժառութեան կրքերը և պատժելու յանցաւորին կամ մի քանի յանցաւորներին, մատնութեան է դիմում և մեծ չարիքի ու անմեղ զոհերի արեան հոսման պատճառ դառնում։ Այսպիսի անօրինակ ակտով նա ապացուցանում է, որ ինչպիսի յեղափոխական է եղել նա և ինչքան արժանի այդ սուրբ կոչման։

Լսում եմ և բառ չեմ գտնում որակելու այն հրէշին, որը յեղափոխական և «չէֆ» լինելով հանդերձ պղծում է ընկերոջ ընտանեկան սրբութիւնը, այն սրբութիւնը՝ յանուն որի զինւորագրվել է ինքը, յանուն որի տառապում է տարիներ հայութիւնը։

Այս խայտառակութիւնից յետ մեր ազգասէրները, այրված սրտի որպէս մխիթարութիւն, փողհարեցին, որ հայ և թիւրք համերաշխութեան շնորհիւ Վանում կոտորած չեղաւ, մինչդեռ հայ յեղափոխականները բաւականին թիւրք զինւորներ ջարդեցին։ Ցայտարարեցին նոյնիսկ, որ թիւրք յեղափոխականները իրանց յայտնել են, որ «թիւրք խուժանը մեր դիակներու վրայով միայն կարող է գալ ձեզ կոտորելու»։ Որքան ախորժ է հնչում մարդու ականջներին յիշեալ նախադասութիւնը, և երևի այդ խոստումից ոգևորված և սիրտ առած մեր լաւատես յեղափոխականները փորձում են սպանել իրանց երբեմնի ընկեր Դաւթին, որի մահը պսակվում է մօտ հարիւր հայ անմեղ զոհերի արիւնով. դեռ չեմ հաշւում թիւրք յեղափոխականների անհամար դիակները, որոնց վրայով՝ ըստ վերոյիշեալ յայտարարութեան թիւրք յեղափոխականների՝ պիտի անցած լինի թիւրք խուժանը հայերին կոտորելու համար (sic)։

Պարզերես չէֆերի շնորհիւ իրանց ընկեր մատնիչի մահը՝ մէկ հարիւր անմեղ նահատակների արիւն—այս բոլորը միասին համարվում է «հայ յեղափոխութիւն»։

Շուր

—

Մօզդօկ, 6 մարտի

«Մշակի» № 45-ում Մօզդօկի ծխ. դպրոցների աւագ-ուսուցիչ, կամ՝ որպէս ինքն է սիրում յորջորջվել՝ «տեսուչ» Ղազար Տէր-Գրիգորեանը ճգնում է ոչ միայն իրան արդարացնել, այլ և մեղադրել ինձ տեղիս խառն դպրոցները իրարից զատելու խնդրում։

Պարոնը «Մշակի» № 181-ում Մօզդօկի հոգաբարձուների մասին իմ գրածներս լուտանքներ համարեց, առանց, ի հարկէ, որևէ փաստի. բայց միթէ մի ուրիշ յարմար միջոց կարող էր նա գտնել, որպէսզի աւելի հեշտ կերպով կարողանար մտնել աղա-հոգաբարձուների թևերի տակ։

«Լուտանքներ» պիտի համարէք, ի հարկէ, պ. «տեսուչ», քանի որ, աղա-հոգաբարձուների թևի տակ մտնելուց յետոյ, դուք այլ ևս շատ ամուր էք զգում ձեզ ձեր գերքի վրա, այնչափ ամուր, որ ուսուցչութիւնից արդէն իսկ հրաժարված մէկին (պ. Յակ. Գևոնջեանին) արտաքսելու, իսկ միւսին—տողերիս գրողին—Եղթակցութեան պատճառով արձակելու քաջութիւնն ունեցաք։ Դուք չը կարողացաք տանել, որ «ձեզ յանձնրված» դպրոցի ուսուցիչը «համարձակվում է» խոստանալ ձեր վանդալութիւնները երևան հանել։ Երևի նոյնպէս «լուտանքներից» է կազմված և այն գործը, որի համար դուք քրէական դատի էք ենթարկված։

Բայց, գոնէ, պ. տեսուչ, փոքր ինչ հետևողական լինէիք ձեր մեղադրանքների մէջ։ Դուք «Վտակի» № 22-ում ինձ և ձեր միւս հակառակորդներին մեղադրում էք այն բանի մէջ, թէ մենք իբր նախօրօք պատրաստել ու գրգռել էինք ժողովրդին, դպրոցները բաժանելու խնդրի առիթով, իսկ «Մշակի» № 45-ում, երևի, մոռանալով ձեր առաջվայ գրածը, ինքներդ խոստովանում էք,որ հասարակութիւնը մեզ չէր ճանաչում, նոյնիսկ մեր ազգանունները չը գիտէր։ Այդ ինչպէս ուրեմն պատահեց, որ մեզ բոլորովին չը ճանաչող հասարակութեանը և պատրաստեցինք և գրգռեցինք։

քեասը, եօր՝ մէկէլը... Վերջը. ծխ կը ցանի, ծխ կը հնձի. հացը ծոցերից կը բուսնի... Մեր նեղութեան օրին ծխ մեզ կը հասնի... Չէ, հարուստը պէտք է դինջ նստի. մենք կաշխատենք։ Էսպէս է մեր հալը։

— Հա,—քիչ մտածեց Մինասը, լսելով կնոջից հարևանների ասածները։—Բաս թող այս ճոթեղէնը տանեմ յետ տամ... քեասիբին ինչ է պիտոմ չոր... Եթէ մենք չը ցանենք՝ հարուստը հաց չի ուտի. նա էլ է ուզում հաց ուտել։ Բաս չուզի... Թէ քեասիբը մի փոր կուզի՝ նա պէտք է վեցն ուզի։ Շոր հագնել էլ չի ուզում։ Վեց քեասիբ որ տկլոր ման գան՝ հարուստը վեց ձեռք կը հագնի...

«...Իմ հացը պէտք է ուտի, իմ շորը հագնի։ Հաց ես ուզում՝ վարի, ցանի։ Էդ են խօսում, որ մեր խելքն էլ մեր գլխից պակսում է, հարուստի խելքի վրա աւելանում... Թէ մի տաս տարի առաջ գլխիս կը խփէր Եղիազարը. ինչ անեմ. ուշ աչքս բացվեց. ծերացել եմ...

«...Թող իմ երեխան էլ տանից դուրս գայ. վաղը, Ծաղկազարդին, Զատկին, բոլորը խաս ու արբշում հագած, կուշտ կերած—պագած, մայրերի և մօրաքոյրերի հետ հրնդուհաների նման դուրս կը թափվեն։ Բան պակաս չունեն իրանց նշանից տան, սաղացնեն, մարդու գնան... Իմ աղջիկներն էլ հասել են. Թող իմոնք էլ գնան—արևի երես տեսնեն, ծառ, ծաղիկ, սառն ջուր ջրտից հեռանան...

«...Հա. շատ դժուար է թւում և սրտներին չի գալիս, որ այս տարին հերվայ նման քաղցած չենք։ Ինչմ՞ու չէին հարցնում առաջ. տուն մտնէին, մի կտոր հաց բերէին... է-է, թող...»

Չէին մոռացել. հինգ զոյգ աչք և հինգ փոր դատարկ էին նայում։ Տօները գնում-գալիս էին, զանգերը ղօղանջում։ Չէին իմանում։ Եւ երբ Մինասը ալիւր էր բերում տուն—ամեն շաբաթ մի պուտ ալիւր—այդ օրն էր տօն։ Ուրիշ բան չէին ուզում. միայն թէ ցամաք հացը հասցնէր։ Դարձեալ զանգերը ղօղանջում են... Նրանք գիտեն, որ տօն է։ Մայրը աղջիկների հետ եկեղեցի է գնում, ճաշին կերակուր են եփում, իսկ շաբաթ օր, Թաթախման երեկոյ, նրանք կունենան ամեն բան, ինչպէս առաջ, և հայրիկը բաժակը կը վերցնի, կօրհնի, կը շնորհաւորի Զատիկը։ Կարմիր ձու մի-մի հատ կը կճպեն, յետոյ մայրիկը ձուաձեղը տաք-տաք կը բերի։ Փլաւը՝ չամիչով, չիրը՝ խաշած, սառը։ Ուրիշ։ Բոլորը այդ է։ Հա, ձուկ, թազա ձուկ հօ կը լինի... Առաւօտ մարդիկ տներ ման կը գան.—Շնորհաւո՜ր Զատիկ, Քրիստոս յարեաւ ի մեռելոց, օրհնեալ է յարութիւն Քրիստոսի... Հայրիկն էլ ման կը գայ, իսկ իրանք, նոր շորեր հագած, բակում կը լինեն, փողոց կը նայեն, հարևանների հետ, արևի տակ, կանաչների վրա։ Փողոցում երգ, ուրախութիւն, հարբած մարդիկ... Է, թամաշէն շատ կը լինի։

Ուղիղ մի շաբաթից յետոյ։

Այսօր Ծաղկազարդն է։ Առաւօտ մայրիկը եկեղեցուց ճիւղ բերեց։

— Ի՞նչ անեմ,—ասաց,—կով չունենք՝ թէ խնոցուն կապեմ, իւղս շատանայ։ Դնեմ դռան վերևը, կանաչ օրեր գան չեմքի վրա։ Մեր չեմքն էլ չէ։ Ի՞նչ անեմ. վերան մնաս, տուն, որ մեզ սեֆար չը տալիս...

— Մայրիկ, խնոցուն կապիր. հայրիկը կով կառնի։

— Զունէինք։ Հա, Թան-Թացան, Թանթացան լինի, ամառը ցամաք չենք մնայ. մեզ ինչ ենք անում. ամիսը մէկ անգամ համի համար։ Էնքան էլ կարողութիւն կայ որ կով առնենք։ Ուրիշները պարտքով կառնեն, աշնանը կը տան... Մեր աչքը պարտքից վախեցել է... պարտատիրոջ երես էլ տեսնեմ եա։

— Անուշը մի տուր, կնիկ, աղջկներս գալարվում են... Ձեռքս կը գցեմ, բկից կը բռնեմ, կը խեղդեմ։ Թող մէկ էլ հանդիպի։ Ճիշ մնաց. հիմի էն դառն եմ տուել, որ մօտ չի գալ...

— Չէ, կը սպանեմ...—աւելացրեց, շալակը ցած դնելով։

— Մեզ բան չես ասում, ինչ է եղել...

Կէս ժամ առաջ, բազարում, Եղիազարին էր հանդիպել։

— Փակած էրը կբռնես... Մինաս, ամօթ է. նամուսս հաւաքել եմ, չեմ խօսում, լինի որ քո կամքով գաս՝ մնացած հաշիւը վերջացնենք։ Դու տեղումդ բան չես մտածում, մոռանում ես... Ես չեմ մոռանում... Իմ հալալ աշխատանքը, իմ ճակատի քրտինքը։ Բեր տուր, այ ախպէր, բեր։ Հիմա հօ ունիս։ Բրինձ-բան ես առնում երեխէքիդ համար։ Իմ երեխէքն էլ մեղք են, ես էլ մեղք եմ։

Մինասը տաշը գրվանքանոց քարը վերցրեց ու յարձակվեց վրան։ Չը թողին։ Նա այնպէս էր դողում։ Բղաւում էր, ձայնը բազարի միւս ծայրում լսում էին։

— Արիւնդ կը խմեմ, արիւնդ... Չեմ տուել, չեմ պրծել։ Հազարանոց տեղը հինգ հարիւրի տեղ վերցրեր. տունս... Տանս, տեղիս տիրացար, չօլերը քցիր, հիմա չես թողում հացն հալալ բողազս մտնի...

— Ախպէր,—բացատրում էր Եղիազարը իրան շրջապատողներին։ Տունն ինչ է, տեղն ինչ է, երեք հարիւրի տեղ է մնացել վրան։ Մնացածը, երկու հարիւրը չէ տալ... «Պարտքը տալով մեղքը լալով»։

— Կը սպանեմ,—գոռում էր Մինասը։

— Կը սպանեմ,—կրկնում էր հիմա,—թող մօտ գայ, կրակն ուղի։

Եւ մտամոլոր ման էր գալիս, մի բան վերցնում, միւսը դնում ու շշնջում էր.—«Կը սպանեմ, չեմ դինջանում... հոգիս վառվում է»։

Ամեն օր՝ այդպէս. մինչև շաբաթ օր, Թաթախման երեկոն՝ նոյնը։

Համոզում էին հանգստանալ, հանդարտվել, թողնել, չը մտածել Եղիազարի մասին, աղաչում էին, պաղատում։ Գործից յետ չէր ընկնում, բայց չէր էլ մոռանում։

— Կը սպանեմ...

Հացի նստելիս, Թաթախման ընթրիքին, նա լուռ էր երկար։ Երբ բաժակը ձեռն առաւ, թւում էր, որ նրա շրթունքները պատրաստվում են նոյն բառը շշնջալ. բայց երևի նա զսպեց իրան, յիշեց ինչի համար է վերցրել բաժակը և ինչ օր է։ Նրա շրթունքներից թռաւ այդ բառի շուաքը. նրանք ամուր սեղմվեցին, իսկ աչքերը թափում էին։

— Օրհնում եմ ձեզ, բալէքս. ծլէք, ծաղկէք, զօրանաք։ Շնորհաւոր Զատիկ։ Գէվօյի աղջիկ, Քրիստոս յարեաւ ի մեռելոց, ողջ լինեք, մարդով և երեխէքով։ Օջախից կրակն անպակաս լինի...

Եւ մութ ամպերը փարեցին նրա ճակատը։

Ընթրիքն անցնում էր տխուր, լռատեսա... պատառը կուլ չէր գնում. գնացածը՝ քարի նման նստում էր սրտներին...

— Ինչու ես լալիս, աղջի...

— Չեմ լալիս... խնկի ու թոնրի ծխից աչքերս չեն դիմանում։

— Դէհ, դէհ, տեսք, չը լաս։ Կը սպանեմ,—գոռաց յանկարծ նա ուժգին ձայնով և վազեց դէպի դուռը...—Պէտք է սպանեմ, անկարելի է... Թողէք, դէհ, բաց արէ, յետ քաշվէք... կը սպանեմ... հարամ կանեմ Զատիկը... քթից կը բերեմ... կը լացացնեմ... կը մղկտացնեմ, թողէք...

Վերջապէս նա թուլացաւ, հանդարտվեց և էլ չէր խօսում։

Առաւօտեան, շնորհաւորէքից յետոյ մարդիկ ասում էին միմեանց.

— Գիտէք, Մինասը խելագարվել է...

Որոնող

Այդ ինչպիսի դուք կարծիք ունէք Մօզդօկի հասարակութեան մասին, պ. տեսուչ:

Այդ դեռ բաւական չէ: Դուք իմ բերանն էք դնում («Մշակ» № 45) այնպիսի բառեր և արտայայտութիւններ, որպիսիները ես ոչ միայն Մօզդօկի ժողովներում, այլև իմ կեանքում ոչ մի տեղ արտասանած չունեմ: Ռօսքս դպրոցները բաժանելու և արժան ուսուցիչներ հրաւիրելու հարցի մասին է: Ես ոչ միայն չեմ պաշտպանել այդ հարցը, այլ ուղղակի դէմ եմ եղել. պ. Փենջեանը մի բառ անգամ այդ ժողովում չէ արտասանել: Գ. Ուսգեանը պաշտպանել է հարցը, որպէս ժողովրդի ցանկութիւն, իսկ դուք, պ. տեսուչ, ժողովի սկզբում անգոյն, իսկ վերջը Զաքարիայի պապանձումն էք պահպանել: Արժան ուսուցիչներ բերել տալու հարցը պաշտպանել է պ. Ասլամազեանը, որը և ազնուաբար չէ ուրանում իր ասածները:

Ինչ վերաբերում է ուրարակիր և դպիր լինելուս, որպիսի ածականներով դուք ճըղնում էք ինձ նշաւակած լինել (?), ապա թող ձեզ յայտնի լինի, որ դպիր կամ ուրարակիր լինելը երբէք ամօթ չէ. աւելի լաւ է լինել ուրարակիր, սակայն որոշ համոզմունքների և ուղղութեան տէր, քան թէ «ընտրվել ասաց ուսուցչի» պաշտօնում, յորջորջվել «տեսուչ» և քամելիօնի նման օրը մի քանի գոյն փոխել *):

Ա. Տէր-Յովսէփեան

—

Թիֆլիս, 6 մայիսի

Ի նկատի ունենալով, որ զանազան անձնաւորութիւններից բղխած լուրերին հաւատ ընծայելով Շուլավէրի բնակիչ Աւետիք Մեհրաբեանը դիմել է մեր ծնողներին, որպէսզի վերջիններս մեզ վրայ ազդելով յետ կանգնեցնեն մեզ մեր «Մtsдրուբիև-ներից», այսինքն Գէորգ Աւանեանցի տեղ վրէժխնդիր լինելուց, սրանով յայտնում ենք, որ մենք ոչ մի կապ չունենք այդպիսի դիտաւորութիւնների հետ. իսկ եթէ պ. Ա. Մեհրաբեանը ունի փաստեր յիշեալ լուրերը հաստատող, առաջարկում ենք գործը միջնորդ դատարանի յանձնել: Հակառակ դէպքում, եթէ նրա կողմից կը շարունակվեն նոյն տեսակ դիմումներ և այդ տեսակ լուրեր կը տարածվեն, մենք կը համարենք այդ արված յետին մտքերով և իրաւունք կունենանք անուանել նրան զըրպարտիչ:

Մկրտիչ Դուլեան
Գաբրիէլ Տէր-Սիմէօնեանց

—

Թիֆլիս, 6 մայիսի

Խորին վշտով կարդացի Գ. Վանցեանի ինքնասպանութեան լուրը: Հայ գրական ասպարէզից մի երիտասարդ, ապագայ խոստացող կեանք եւս չքացաւ: Չը կայ այլեւս «Հայ հեղինակների», «Պատմական քերականութեան», «Դպրոցական քերականութեան», «Գրքանի ուղղագրութեան», «Համառօտ հայոց պատմութեան» և այլ աշխատութիւնների ու զանազան հայ պարբերական հրատարակութիւնների մէջ լոյս տեսած մշակված յօդուածների հեղինակը: Հանգուցեալը յայտնի էր որպէս բարեխիղճ ուսուցիչ և պատրաստված ու լուրջ գրական գործիչ. բայց որ գլխաւորն է՝ կուսակցական տեսակէտից հեռացող և լայն հայեացքների տէր անձնաւորութիւն. ապացոյց՝ նրա «Հայ հեղինակներ» գրքի, որ կարճ ժամանակում մեծ ընդունելութիւն գտաւ և երկրորդ բարեփոխված տպագրութիւնն ունեցաւ: Միանգամայն ցաւալի է և անսպասելի նրա եղերական վախճանն այն տեսակէտից, որ հանգուցեալը յայտնի էր իբրև տոկուն և դրական մարդ, և ինձ զարմացնում է այն հանգամանքը, որ նա կեանքի ալեկոծութեան մէջ չը կարողացաւ պահպանել հոգեկան հաւասարակշռութիւն և ցոյց տալ հոգեկան արիութիւն: Եւ ես նրա մահը համարում եմ մեր ժամանակի հիւանդոտ արտայայտութիւններից մէկը:

Ռ. Բաբայեան

—

Խդրէնց-գիւղ (Ղափանի շրջ.), 26 ապր.

Ղափանի խուլ անկիւններից մէկում գտնվում է Խդրէնց անունով մի մոռացված գիւղ, որ բաղկացած է 55 տնից: Հայ-թուրքական՝ իր հետեանքներով այնքան աղէտաբեր եղբայրասպան ընդհարումները, տեղի ունեցած պարբերաբար անբերրութիւնը մեր գիւղի ժողովրդին էլ հասցրեց ծայրայեղ թշուառութեան դուռը. մեր գիւղի ժողովրդի ծայրայեղ ողբալի կացութիւնը դէթ մինչև առաջիկայ հունձը փոքր ինչ մեղմելու նպատակով, սրանից չորս ամիս առաջ գիւղացիք ընտրելով մեր համագիւղացի պ. Յարութիւն Զաքարեանցին, համապատասխան թղթով ուղարկեցին պարոնին Բաքու, մեր հարուստ ու ունեւոր հայրենակիցների մօտ, դրանց օգնութիւնը հայցելու սովալլուկ գիւղացիների համար: Սակայն մեր հարուստ հայրենակիցների դռները շատ պինդ էին գոցված և չը բացվեցին մեր ուղարկած մարդու բաղխումներից: Մինչև անգամ մէկը՝ առաջարկել է մեր մարդուն, «որ գիւղացիք կարող են կերակրվել ծառերի կեղևներով, և մենք չենք կարող օգնել գիւղացիներին, որովհետև գիւղացիք կարող են ծառերի կեղևներ գտնել և ուտել, իսկ մենք»: Դուք, պարոն, եթէ խօսք կը տաք դէթ մի օր հրաժարվելու անուշահամ խորտիկներ ուտելուց ու շամպանիա գինի վայելելուց, մենք ձեզ համար ձեր առաջարկած կեղևից մի մեծ արկղ կուղարկենք... Եթէ չէք օգնում ձեր «հայրենակից» սովալլուկ գիւղացիներին, գոնէ մի ծաղրէք, մի խոցոտէք նրանց վիրաւոր սիրտը ձեր անողորմ գիտերով:

Միւս կողմից չենք կարող մեր անչափ շնորհակալութիւնը չը յայտնել պ. [illegible] Տէր-Մարգարեանցին. պարոնը իր [illegible] ցած 1000 րուբ. 300 ր. է [illegible] գիւղի [illegible] ժողովրդի [illegible] մարտի 2-ին բաժանվել [illegible] պետներին, վերադարձնելու պայմանով, Խդրէնց հիմնվելիք ապագայ հասարակական շտեմարանին:

Միևնոյն ժամանակ մեր խորին շնորհակալութիւնն ենք յայտնում մեր համագիւղացի պ. Խաչատուր Յովհաննիսեանցին. պարոնը մի նամակով դիմել է մեզ՝ Խդրէնց գիւղացիներիս, որ իր անունով գիւղում հիմնվի հասարակական շտեմարան, որի օգտին պարոնը սիրալիր պատրաստականութիւն է յայտնել նուիրելու 500 ր.: Արդէն սկսված է հասարակական շտեմարանի ձեռնարկութեան գործը. լիայոյս ենք որ պարոնը, որը նախաձեռնող է հանդիսացել մի այդպիսի հանրօգուտ հիմնարկութեան բացվելու գործին, անկատար չի թողնի իր խոստացած օժանդակութիւնը:

Ի դիմաց Խդրէնց գիւղի հասարակութեան, ժխատէր՝ Յակոբ ք. Տէր-Մարտիրոսեանց

*) Նրանով վերջ ենք դնում այդ բանակւին: Խմբ.

—

Ախալցխա, 1 մայիսի

Կովկասեան հ. բար. ընկ. Ախալցխայի ճիւղի վարչութիւնը խնդրում է «Մշակի» խմբագրութեանը տպագրել յարգելի թերթի առաջիկայ համարներից մէկում հետեւալը:

Որովհետև մեր անդամներից շատերը խնդրել են ներկայ վարչութիւնից ձեռքի տակ եղած փաստաթղթերի հիման վրայ մի ամփոփ տեղեկութիւն տալ հասարակութեան, թէ ինչ նախապատրաստական միջոցներով է վերաբացվել բար. ընկ. տեղական ճիւղը, վարչութիւնս բարւոք համարեց այդ պարոնների խնդրին բաւարարութիւն տալ, քանի որ տեղիս հասարակութեան գործէից անտեղեակ խաւերում տարածված են զանազան թիւրիմացութիւններ:

Որպէսզի նախապատրաստական գործունէութեան պատկերը պարզ լինի ամենքի համար, մենք տալիս ենք հասարակութեան այն անհերքելի տեղեկութիւնները, որոնք հիմնված են մեզ մօտ գտնված փաստաթղթերի վրայ, առանց մտնելու քննադատութեան մէջ:

Մամուլից և ընկերութեան խորհրդի նախագահի ուղարկած ժամանաւոր նամակից տեղեկանալով Կովկասի հ. բար. ընկ. վերաբացվելը, անմիջապէս 15 հոգի անդամակցողներ պ. Գրիգոր Բուդուղեանի հրաւէրով հաւաքվել են տեղիս հասարակական ժողովարանում և կազմելով մի պատշաճաւոր արձանագրութիւն՝ խնդրագրի հետ միասին ուղարկել են խորհրդին Ախալցխայում վերաբանալու նոյն ընկերութեան տեղական ճիւղը:

Խորհրդի № 10 գրութեամբ թոյլատրվել է վերաբանալ տեղական ճիւղ: Այդ առիթով մարտի 20-ին պ. Գրիգոր Բուդուղեանի հրաւէրով և նախագահութեամբ հասարակական ժողովարանում տեղի է ունեցել անդամների մի ժամանաւոր ժողով ճիւղի վերաբացման համար խորհրդակցելու: Ներկայ են եղել 12 անդամներ, որոնք ընտրել են մի ժամանակաւոր մասնախումբ միմիայն անդամներ գտնելու համար: Վերջիններս բաւարար թիւ կազմելուց յետոյ, անմիջապէս հրաւիրել ընդհանուր ժողով վարչական մարմին ընտրելու համար: Մասնախմբի անդամներ ընտրվել են. Գր. Բուդուղեան, բժ. Գ. Այվազեան, Գր. Զաթուլբաշեան, Աբր. Անխոնեան և Խաչ. Թէկմիջեան:

Մասնախումբը տպագրված թերթիկներով յայտարարելով այդ մասին հասարակութեան՝ ձեռնարկել է անդամների ընդունելութեան գործին:

Երբ ստացվել է ընկ. խորհրդի ապրիլի 1-ի գրութիւնը, որով պահանջվելիս է եղել տեղիս վարչութեան շուտափոյթ ընտրութիւնը, մասնախմբի նախագահ պ. Բուդուղեանը սոյն ապրիլի 6-ին հրաւիրել է բոլոր անդամներին ընդհանուր ժողովի ընկերութեան տեղական ճիւղը պաշտօնապէս բացված համարելու և վարչական մարմին ընտրելու համար:

Մինչև առաջին ընդհանուր ժողովը անդամների թիւը հասնում էր 72-ի, որը և կատարել է վարչութեան և այլ ընտրութիւնները: Ահա մերկ իրականութիւնը, որը խնդրում ենք տեղական հայ թերթերին արտատպել:

Նախագահ վարչութեան՝
Գ. Այվազեանց
Քարտուղար-անդամ՝ Աբր. Անխոնեան

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Նոր-Ջուղա, 14 ապրիլի

Լսում ենք՝ Նորին արքայական բարձրութիւն իշխան Զիլլի Սօլթանը դեռ Շիրազ չէ ժամանել. երևի ճանապարհները խաղաղացնելով և անհրաժեշտ կարգադրութիւններ անելով շարունակում է իր ճանապարհը. քաղաքը բոլորովին խաղաղել է. Բուշիրի ճանապարհներն էլ այժմ խաղաղ են, միայն թէ «թօֆանգչիքը» (հրացանաւոր պահապաններ) մեծ-մեծ գումարներ են վերցնում ճանապարհորդներից, ճանապարհները և ճանապարհորդներին իբր թէ պահպանելու համար:

Մեր թեմական առաջնորդից Էջմիածնից հեռագիր հասաւ անցեալ օրը, ուր ժամանել է ամսիս 10-ին, սակայն դեռ յայտնի չէ, թէ երբ է թողնելու և երբ ժամանելու այստեղ:

Լսում ենք՝ Կալկաթայի մարդասիրական ճեմարանի նախկին սաներից մի քանիսը, որոնք Հնդկաստանում և Ջավայում յայտնի վաճառականներ են, իրանց մէջ հանգանակել են մօտ 100,000 րուբլի. առաջարկվում է վաճառել ճեմարանի այժմեան շէնքը (որովհետև անյարմարութիւններ շատ ունի), և գոյացած և հանգանակած գումարներով մտադիր են մի յարմարաւոր վայրում կառուցանել դպրոցական և [illegible] պայմաններին համապատասխան մի նոր շէնութիւն. գովելի է [illegible] թեան արժանի [illegible] սակայն [illegible] ենք տալիս իրանց՝ նախապէս լուրջ ուշադրութիւն դարձնել ճեմարանի ներքին կազմակերպութեան վրայ, որովհետև բաւական չէ ունենալ միայն մի փառաւոր շէնութիւն. աւելի անհրաժեշտ է ունենալ բարեխիղճ ուսուցիչներ, համապատասխան ժամանակի պահանջներին: Կալկաթայի ճեմարանը, որը 88 տարվայ պատկառելի մի հաստատութիւն է, համեմատաբար շատ քիչ արդիւնք է ցոյց տուել և միշտ իր կոչման բարձրութեան վրայ կանգնած չէ եղել դժբաղդաբար, թէև լաւ կառավարութեամբ կարող էր մի պատուաբեր հաստատութիւն լինել Հնդկաստանի անգլիացոց և կաթոլիկաց բազմաթիւ համալսարանների և դպրոցների շարքում:

Լսում ենք՝ բնիկ Նոր-Ջուղայեցի և այժմ Ջավայի Բատաւիա քաղաքում բնակվող պ. Յորդանան Յորդանանեանը՝ Ջավայեան կղզիներում բնակվող մեր հայրենակիցներից հանգանակել է մօտ 2000 գելտր գումար ի նպաստ տեղիս կանանց բարեգործական ընկերութեան. ուրախալի է, որ մեր յարգելի հայրենակիցը հեռուից մեծնելով այստեղի բազմաթիւ պէտքերը և կանանց ընկերութեան կարևորութիւնը՝ ձեռնարկել է մի այդպիսի բարի գործի. տայ Աստուած, որ Հնդկաստանի և Ջավայի բազմաթիւ հայ երիտասարդներն էլ նրա բարի օրինակին հետևեն և նպաստեն նիւթապէս և բարոյապէս մեր ազգային հաստատութիւններին:

Լսում ենք՝ Բուշիրի (Պարսից ծոց) մի քանի երիտասարդների ջանքերի՝ շնորհիւ, քանի ժամանակից ի վեր այնտեղ բացվել է մի փոքրիկ մի դասեան դպրոց, որտեղ յաճախում են երկսեռ փոքրիկ երեխաներ և սովորում են իրանց մայրենի լեզուն, որից դժբաղդաբար բոլորովին զուրկ էին առաջները. դպրոցը կառավարում է մի Նոր-Ջուղայեցի օրիորդ. մաղթում ենք կատարեալ աջողութիւն և յարատեւութիւն:

Շիրազի մի բուռն հայերի ազգային գործերը դժբաղդաբար շատ աննախանձելի դրութեան մէջ են, շնորհիւ այդտեղի հայերի անհամերաշխութեան: Լսում ենք՝ վերջերս էլ փակել են իրանց նորահաստատ ընթերցարան-գրադարանը:

Լսում ենք՝ Թեհրանի, Շիրազի և Բուշիրի հայոց եկեղեցիների երեսփոխանները իրանց հաշիւները ուղարկել են առաջնորդարան տպագրութեան համար. ցանկալի է, որ բոլոր վիճակների երեսփոխաններն և դպրոցների հոգաբարձուներն էլ հետևեն սրանց բարի օրինակին, որպէսզի հնարաւոր լինի ամեն տարվայ վերջին լոյս ընծայել մի գրքոյկի մէջ Պարսկա-Հնդկաստանի թեմի բոլոր հաստատութիւնների հաշիւները միասին:

Նոր-Ջուղայեցի

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Թիֆլիս, Վօրոնցովի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԲԺԻՇԿՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.:
Ն. Մ. ՋԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և նեարդային:
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.:
Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.:
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ., վիրաբուժութեան և միզասեռ.
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՈՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց ծաղկահատ.:
Կ. Ի. ԳՋԵԼԻԵՎ—1—2 ժ. ականջի, քթի և կոկորդի:
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.:
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՉԵՐԲԻՆԱ—1½—2 ժ. մանկաբարձութեան:
Գ. Յ. ԳՈՒՐԳԵՆՈՎ—12—12½ ժ. կանանց և մանկաբարձութեան:
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Ա. Յ. ԳՐԻԳՈՐԵԱՆ—6—7 ժ. վիրաբուժ., վեներական, միզասեռ և մորթու հ.
Վճարը 50 կ.: Չքաւորները ձրի: Համախորհրդի (կօնսիլիում) և օպերացիայի համար առանձին: Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան

ԲԺՇԿԱՊԵՏ
Վ. ԱՐԾՐՈՒՆԻՆ
մեկնեց Պեատիգօրսկ (Կովկ. հանք. ջրերը): Հասցէն՝ Верхній бульваръ д. кн. Гирей.
10—2

ԲԺԻՇԿ
Ա. Մխիթարեանց
Ընդունում է հիւանդներին. մասնագիտութիւն՝ սիֆիլիս, միզային, վեներական և մորթու հիւանդութիւններ. առաւօտեան 12—2 ժ., երեկ. 5—7 ժ., Սօլօլակ, Բեհբութեան փողոց № 33.
(ա. օ.) 100—45

ԲԺՇԿԱՊԵՏ
Ա. ՔԱԹԱՆԵԱՆ
վերսկսեց ընդունելութիւն
Ներքին եւ Ջղային
Հիւանդների
Պեատիգօրսկում, Վերևի բուլվար № 14. տ. իշխ. Գիրէյի, Пятигорскъ, Верхній бульваръ, д. кн. Гирей.
30—2

ՀՐԱՒԷՐ
Ս. Էջմիածնի սինօդի հրամանի համաձայն և թեմիս սրբազան առաջնորդի կարգադրութեամբ յայտնվում է ի գիտութիւն Մօղնու ս. Գէորգ եկեղեցու ծխականներին, որ սոյն մայիսի 11-ին, ժամը ուղիղ 12-ին, յիշեալ եկեղեցում նշանակված է ծխական ժողով, ուր հրաւիրվում են ներկայ լինել արական սեռի պատկանող այն ծխականները, որոնց հասակը պակաս չէ 25 տարեկանից, ընտրելու երեք երէցփոխ-պատուիրակներ, որոնք թեմիս միւս պատուիրակների հետ գումարվելով սեպտեմբերի 21-ին առաջնորդարանում՝ ընտրելու են թեմի կողմից մի պատգամաւոր ամենայն հայոց կաթողիկոսի ընտրութեանը մասնակցելու համար:
Սիմէօն աւ. քահ. Զմշկեան
(չ. հ. շ.) ատ. 3—1

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ
19 տարեկան
որոնում է գործակատարի կամ մի որեւէ ՊԱՇՏՕՆ: Ունի երաշխաւորութիւն: Հասցէն՝ Армянскій базаръ, № 15. Магазинъ серебряныхъ вещей Махмуда Кожлаева.
(չ. ու. կ.) 3—1

Ամսական 200 րուբլի եւ աւելի
կարող են վաստակել եռանդոտ և գործունեայ գործակալները: Առանձին մասնագիտութիւն պարտադիր չէ: Առաջարկութիւնները ուղղել՝ J. Appold, Frankfurt a. M., Германія.
1—1

ԱԴՈԼՖ ՌՈՒԴԷ
Ժողովրդական դպրոցի
ՄԵԹՕԴԻԿԱ
Փոխադրեց գերմաներէնից
Յովհաննէս Տէր-Միրաքեան
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ
Ներածութիւն. Պատմութեան նախաշաւիղների ուսուցումը. Պատմութեան ուսուցումը. Աշխարհագրութեան ուսուցումը. Բնագիտութեան ուսուցումը. Հայոց լեզուի ուսուցումը. Թւաբանութեան ուսուցումը. Երկրաչափութեան ուսուցումը. Ձեռնարկական ճշմարտութիւններ:
ԳԻՆՆ Է 1 Ր. 50 Կ.
Կազմված՝ 1 ր. 90 կ.
Դիմել, Тифлисъ, книжный магазинъ „Гуттенбергъ". Г. И. Галустяну. Գրախանութի ցուցակը ցանկացողներին ուղարկվում է ձրի:
(չ. ու. ե.) 10—3

Լոյս տեսաւ
„ԾԻԾԱՂԱԲԵՐ"
Հայրեկ, Պարոնեան, Պըլը-Պուղի, Մոլլա-Նասր-Էդդին և ուրիշ ազգային ու օտար զուարճախօսներ:
182 ԸՆՏԻՐ զուարճախօսութիւն—անեկդօտներ, 112 երես, գինը՝ 20 կոպէկ:
Դիմել գրավաճառներին: Ինձնից գումարով գնողներին 20% զեղչ և ճանապարհածախսը իմ հաշւին: Մշտական հասցէս՝ Тифлисъ, Хачатуру Хачатріанъ, 9 уч. Лысогорскій пер. № 10.
(չ. ու. կ) 10—8

Զգուշացէ'ք կեղծումներից
ՍԱՆՏԱԼ ՄԻԴԻ
(Թոյլատրված Ռուսաստանում)


Չը կայ լաւագոյն միջոց, քան Սանտալ Միդիի, պերելօյի (հօնօրրէյ) ամենայարատև դէպքեր բժշկելու համար:
Սանտալ Միդիի յաջողութիւնը և էսսենցիայի մաքրութիւնը թոյլատրում են գործածել առանց վնասելու մարսողական գործարաններին:
Պահանջել'որ գրված լինի „Midy" MIDY
Գտնեւոր Ռուսաստանի գլխաւոր դեղատներում:
(շ. 1 ան. չ.) 25—24

ԿԱՍԿԱՐԱ-ՄԻԴԻ
Պիլիւլներ, ֆրանսիական ժողովրդական միջոց
ՍՈՎՈՐԱԿԱՆ ԱՄՐՈՒԹԵԱՆ ԴԷՄ


Չափը.—2 պիլիւլ երեկոյեան պառկելիս: Կասկարա-միդին չէ առաջացնում ոչ փորացաւ, ոչ սիրտ-խառնուք, ոչ էլ լուծողութիւն:
Դեղատուն—Midy, 113, Faubourg St. Honoré, Պարիզ:
ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԳԼԽԱՒՈՐ ԴԵՂԱՏՆԵՐՈՒՄ:
(7, 17, 27) (165951) 24—16

ՆՈՐ ԳԻՒՏ
„ԲՕՐՆՕ ՆԱՖԹԱԼԱՆ"

Բոլորովին փչացնում է գլխի թեփը, պիրքացնում մազերը, նպաստում է նրա բուսնելուն և տալիս է նրան բնական տեսք:
Թոյլատրված է բժշկական վարչութիւնից, որպէս չը պարունակող ոչ մի վնասակար նիւթ:
Վաճառվում է՝ Кавказское Т-во торгов. аптек. товарами; Офицерское Экономическое общество и въ ихъ отдѣленіяхъ. դեղատներում, գեղավաճառների և հոտաւէտեղէն ծախողների մօտ:
(7,32) 25—21

ВЕСНА и ЛѢТО 1908 г.
Вышелъ изъ печати вторымъ изданіемъ и поступилъ въ продажу
№ 6 моднаго альбома „ВОРТ"
НА ВЕСЕННІЙ И ЛѢТНІЙ СЕЗОНЫ 1908 г.
Альбомъ „ВОРТ" пользуется колоссальнымъ успѣхомъ. Доказательствомъ этому можетъ служить одно то, что первое изданіе было распродано въ теченіе двухъ недѣль со дня выпуска его. Такой исключительный успѣхъ нашего альбома является лучшей для него рекомендаціей. Второе изданіе, перепечатанное безъ всякихъ измѣненій съ перваго, содержитъ свыше 600 лучшихъ моделей блузъ, юбокъ, домашнихъ, визитныхъ, вечернихъ подвѣнечныхъ и траурныхъ платьевъ, костюмовъ для гулянья, капотовъ, реформъ-платьевъ, верхнихъ вещей, дѣтскихъ нарядовъ и бѣлья на весенній и лѣтній сезоны 1908 г. Описанія моделей на русскомъ языкѣ. Цѣна въ Москвѣ 1 р. 25 к., съ перес. 1 р. 50 к. Съ приложеніемъ трехъ выкроекъ (блузы, юбки и рукава) въ Москвѣ 1 р. 75 к., съ перес. 2 р.—Налож. пл. на 10 к. дороже. Съ требованіями обращаться въ главн. контору издательства модъ „Модная Почта", Москва, Кузнецкій мостъ, д. № 3, Третьяковыхъ.
4—3
ապր. 25, 27, մ. 7, 16